Ազգ
Azg
25 ՅՈՒԼԻՍ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 127(5210)
ISSN: 1829-1651

# Պուտինը՝ Ադրբեջանի ճանապարհի՞ն

Երեկ օրվա վերջին ՌԴ նախագահի Պուտինի խոսնակ Դմիտրի Պեսկովը APA գործակալությանը տեղեկացրել է, որ «նախապատրաստվում է Պուտինի այցը Ադրբեջան»: Պեսկովի ասելով, «այցի ճշգրիտ ժամկետի մասին կհայտարարվի մոտ ժամանակներս»:

Haqqin.az-ը, առանց աղբյուր նշելու, սույն տեղեկատվությանը հավելել է, թե «հայտնի է, որ օգոստոսի 12-ին Պուտինը նավով կայցելի Իրան» եւ ավելացրել, որ «ամենայն հավանականությամբ, մինչ այդ նա կարճատեւ կանգառ կունենա Ադրբեջանում»:

Նույն լրատվամիջոցը տեղեկացրել է նաեւ, որ իրենց թղթակիցը կապ է հաստատել Կրեմլի մամուլի ծառայության հետ, որտեղ ասել են, թե «Վ. Պուտինի Ադրբեջանի այցի ժամկետները որոշված չեն» եւ խորհուրդ են տվել դիմել ՌԴ նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովին: Ըստ երեւույթին, վերջինիս հետ ադրբեջանական լրատվամիջոցին չի հաջողվել կապ հաստատել:

Ավելի վաղ ադրբեջանական «Զերկալո»-ն գրել էր, թե ՌԴ նախագահի Ադրբեջան այց կատարելու մտադրության մասին «տեղեկատվական արտահոսքը կազմակերպված է եւ որոշակի քաղաքական նպատակներ է հետապնդում»: Թերթն իր եզրահանգումը հիմնավորել էր նրանով, որ ոչ ռուսաստանյան, ոչ ադրբեջանական «պաշտոնական շրջանակները որեւէ կերպ չեն մեկնաբանում մամուլի տեղեկությունները»:

Եթե ադրբեջանական կիսապաշտոնական APA գործակալության տեղեկությունն իրոք ստացվել է ՌԴ նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովից, ապա կարելի է ասել, որ ռուսաստանյան կողմն արդեն իսկ պաշտոնապես հաստատել է, որ Պուտինը մտադիր է ուղեւորվել Ադրբեջան: Ե՞րբ դա տեղի կունենա՝ արդեն էական չէ:

Ռուսաստանցի քաղաքագետ, եվրասիականության ջատագով Ալեքսանդր Դուգինի կարծիքով, Պուտինը «Բաքվում Ալիեւի հետ կխոսի բարեկամաբար, կարելի է ասել՝ եղբայրաբար», բայց ավելացրել, որ «դրա համար հարկ կլինի արտաքսել բազմաթիվ խորհրդականների, որոնք չխանգարեն բարեկամական մթնոլորտին»:

Երեկ Դուգինի «խորհուրդներին» անդրադարձել է News Baku Post թերթի խմբագիր Թոֆիգ Աբասովը եւ նկատել տվել, թե «կարիք չկա նման կոշտ նախապայմաններ հնչեցնել»: Կարելի է հասկանալ, որ Մոսկվա-Բաքու՝ փորձագիտական մակարդակի «փոխհրաձգությունը» մոտակա օրերին ավելի է սրվելու: Այնպես որ բացառված չէ, որ Պուտինի՝ Բաքվում երկար սպասված ուղեւորությունն իրոք «շրջադարձային դառնա», բայց՝ ռուս-ադրբեջանական հարաբերությունները վերջնականապես փակուղի մտնելու իմաստով:

Ըստ երեւույթին, հենց այդ զգուշավորությունն է պատճառը, որ Պուտինը որոշել է Ադրբեջան ուղեւորվելուն մեծ հնչեղության չտալ, այլ ամեն ինչ տեղավորել Իրան մեկնելիս «կարճատեւ կանգառ ունենալու անհրաժեշտության» մասին դիվանագիտական ձեւակերպման շրջանակներում:

# Ուղեվարձի բարձրացումը գերշահույթները պահպանելու համար է

Տրանսպորտային սակագնի բարձրացումը վերջին մի քանի օրերի ընթացքում հանրային լուրջ քննարկումների պատճառ դարձավ: Ամբողջ թոհուբոհի մեջ նկատվեց մի կարեւոր օրինաչափություն՝ հեռուստատեսությամբ հիմնականում փորձ էր արվում արդարացնելու սակագների այդ բարձրացումը, իրերի դրությունը ներկայացնելով այնպես, թե դա է ոլորտում առկա խնդիրների լուծման միակ ուղին: Հակառակ կողմից բերվող միակ լուրջ փաստարկը թերեւս այն է, որ մարդիկ չեն կարող վճարել, որ նման գները անթույլատրելի են, սակայն ռացիոնալ կերպով հիմնավորված փաստարկները հազվադեպ են: Ստորեւ մենք կփորձենք հասկանալ, թե որքանով է հիմնավոր 150 դրամ սակագնի սահմանումը՝ ուշադրությունը բեւեռելով փաստերի վրա:



Համաձայն քաղաքապետարանի տվյալների՝ Երեւանում 63 մասնավոր կազմակերպությունների կողմից պայմանագրային հիմունքներով սպասարկվում է 112 միկրոավտոբուսային երթուղի, որոնցում շահագործվում է 2.7 հազար միկրոավտոբուս: Մայրաքաղաքի ավտոբուսային հավաքակազմում առկա է 578 ավտոբուս, փաստացի շահագործվում է 42 երթուղի, որոնցում օրական միջին հաշվով գիծ է դուրս գալիս 370-380 միավոր շարժակազմ: Միաժամանակ որոշ ոչ պաշտոնական աղբյուրներից պարզ դարձավ, որ գծատերերը պահանջում են վարորդներից օրական 40000 դրամ պլանի կատարում, որը տրանսպորտի սակագնի 50 դրամով թանկացման արդյունքում դառնալու է 60000: Դա նշանակում է , որ խոսքը օրական շուրջ 400 ուղեւոր փոխադրելու մասին է:

370 ավտոբուսը 365 օրվա ընթացքում օրական 400 պլանային ուղեւորի պայմաններում կազմում է տարեկան 54.020.000 ուղեւոր, որը բազմապատկելով 100 դրամով կարելի է ստանալ մինչեւ թանկացումը տարվա կտրվածքով գծատերերի հասույթը ավտոբուսներից: Միկրոավտոբուսների դեպքում այս հաշվարկը ընդունում է հետեւյալ տեսքը: Նախ պետք է հաշվի առնել, որ ինչպես ավտոբուսների այնպես էլ միկրոավտոբուսների ոչ բոլոր մասն են օրվա ընթացքում աշխատում: Պարզելու համար, թե օրվա ընթացքում միկրոավտոբուսների որ մասն է աշխատանքում, կամ, որ նույնն է, քանի վարորդ է դուրս գալիս աշխատանքի, մեզ անհրաժեշտ է երթուղային գծերը սպասարկող կազմակերպությունների տվյալները: Սակայն այդպիսի տվյալներ ստանալը դժվար խնդիր է, մյուս կողմից, եթե անգամ տրանսպորտային կազմակերպությունները տրամադրեն իրենց ներքին գործունեությանը վերաբերող տվյալներ, ապա, ամենայն հավանականությամբ, դրանք կլինեն ոչ արժանահավատ՝ նկատի ունենալով իրենց շրջանառությունը արհեստականորեն նվազեցնելու տնտեսվարողների ջանքերը:

Տես էջ 4

# Եվրոմիության հետ առեւտրի հիմնական փաստաթուղթը բանակցված է

Եվրոպական միությունն ու Հայաստանը երեկ հաջողությամբ եզրափակել են Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման բանակցությունները, որը ԵՄ-Հայաստան Ասոցացման համաձայնագրի մի մասն է:

Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ բանակցությունների 7-րդ եւ միաժամանակ վերջին փուլն անցկացվել է երեկ Երեւանում, որի ընթացքում բանակցողները փաստաթղթի հիմնական տարրերի վերաբերյալ համաձայնության են եկել, ինչը «ԵՄ եւ Հայաստանի միջեւ առեւտրային հարաբերությունների նոր շրջանակ կստեղծի»: ԽՀԱԱԳ համաձայնագիրը կխզորացնի Հայաստանի տնտեսական ինտեգրումը ԵՄ-ի հետ՝ հայկական եւ եվրոպական ապրանքների ու ծառայությունների համար մեկը մյուսի շուկայում առավել լավ հասանելիություն ապահովելով:

«Այն Հայաստանին հիմք կտա իր առեւտրային հարաբերությունները արդիականացնելու, նաեւ տնտեսական զարգացման համար», ասվում է հաղորդագրության մեջ, մասնավորեցմամբ, որ Հայաստանում իրականացվող բարեփոխումները Հայաստանի համար պայմաններ կստեղծեն տնտեսության հիմնական ճյուղերը ԵՄ ստանդարտներին համապատասխանեցնելու համար: «Ակնկալվում է, որ ԽՀԱԱԳ համաձայնագրով առեւտրային կատարելագործված հնարավորությունները ԵՄ եւ Հայաստանի համար տնտեսական օգուտներ կբերեն»:

Հաղորդագրությունում մեջբերում է արված անկախ մի ուսումնասիրությունից, որի համաձայն երկարաժամկետ կտրվածքով Հայաստանի տնտեսությունը յուրաքանչյուր տարի կարող է լրացուցիչ 146 մլն եվրո ունենալ, երբ ԵՄ-ը կարող է շահել մոտ 74 մլն եվրո:

Վ. Պ.

# Ասորիների ցեղասպանության հուշարձան Բելգիայում

Այդ մասին հուլիսի 20-ի հաղորդագրությամբ, որը երեկ հրապարակեց «Հայթերթ» կայքէջը, տեղեկացրել են Բելգիայի ասորական ինստիտուտն ու «Սեյֆո» կենտրոնը: Հաղորդագրությունը տարածվել է Լիեժ քաղաքից: Ահա թե ինչ է ասված.

«Եվրոպայի կենտրոնում կանգնեցվում է ասորիների ցեղասպանության՝ Սեյֆոյի եւս մեկ հուշարձան: Մինչ այդ համանման հուշարձաններ կանգնեցվել էին Ավստրալիայում, Ամերիկայում, Հայաստանում եւ Ֆրանսիայում: Հուշարձանի կառուցումն իրականացվել է Բելգիայի ասորական ինստիտուտի ու «Սեյֆո» կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ:

«Սեյֆո» բառը ասորերենում նշանակում է «սուր» եւ խորհրդանշում է 1915-ին Օսմանյան Թուրքիայում քրիստոնյա ասորիների, հայերի եւ պոնտացի հույների դեմ իրագործված ցեղասպանությունները: Ասորիների ցեղասպանության հուշարձանը կկանգնեցվի Բելգիայի Լիեժ քաղաքի հռչակավոր Բանյո Սանկտուերին այգում, որն այցելում է տարեկան ավելի քան 1 միլիոն մարդ: Հուշարձանի բացման արարողությունը տեղի կունենա օգոստոսի 4-ին»:

Հ. Չ.

# Մնանկ եւ անհեթեթ հարցադրումներ

*Հարցազրույց Ռուսաստանի հայերի միության փոխնախագահի Վլադիմիր Աղայանի հետ*

**- Պրն Աղայան, վերջերս Ռուսաստանում բնակվող հայազգի որոշ քաղաքացիներ դիմել են Ռուսաստանի հայերի միությանը մի շարք հարցադրումներով եւ պահանջել միության ղեկավարների հրաժարականը: Ինչպե՞ս եք գնահատում այդ ամենը:**

- Կփորձեմ որպես Ռուսաստանի հայերի միության փոխնախագահի տեսակետս հայտնել այդ մասին:

Ես՝ նախկին աշխատանքիս բնույթից ելնելով, շատ եմ առնչվել անանուն նամակների, նրանցում առաջադրված բազմաբնույթ հարցերի, տարբեր երեւույթների գնահատականների, եւ շատ դեպքերում ներքին հակակրանք, եթե չասեմ՝ զզվանք եմ ունեցել նման նամակների նկատմամբ: Իսկ նրանց հեղինակներին միշտ դասել եմ զրպարտիչների շարքին, որովհետեւ նրանք ոչ մի միջոց չէին խնայում իրենց «հերոսներին» (լինէր անհատ թե կազմակերպություն) վարկաբեկելու գործում: Ծանոթանալով Ռուսաստանի հայերի միությանն ուղղված դիմումի տեքստին՝ վերհիշեցի այդ



անանուն նամակները, բայց մի վերապահմամբ, որ հայտարարության դեռեւս մեզ անհայտ հեղինակները ի վիճակի չեն վարկաբեկելու գործունեությամբ հեղինակավոր, ազդեցիկ վարկանիշ ձեռք բերած կազմակերպությանը, քանզի նրա համբավը վաղուց դուրս է եկել Ռուսաստանի եւ Հայաստանի սահմաններից:

Օրինական հարց է ծագում, թե ինչու Ռուսաստանի հայությանը հուզող հարցերի նկատմամբ պասիվ, հայեցողական դիրքորոշում ունեցող որոշ քաղաքացիներ հանկարծ արթնացան քնից եւ փորձում են «կենսական ակտիվ դիրքորոշմամբ» տասներեքամյա բարձունքից «գնահատել» Ռուսաստանի հայերի միության գործունեությունը եւ այն ներկայացնել, մեղմ ասած, ծուռ հայելու մեջ: Դա, եթե չասենք՝ բարոյական չէ, ապա առնվազն զարմանալի ու տարօրինակ է, անգամ՝ ծիծաղելի:

Մենք մեր թերությունները լավ գիտենք: Գիտակցում ենք, որ առաջադրված շատ խնդիրներ դեռեւս չենք կարողացել լուծել, չենք կարողացել լուծել նաեւ նրա համար, որ հայկական համայնքի որոշ ներկայացուցիչներ մեզ օգնելու փոխարեն բռնել են բամբասանքի եւ կատարված աշխատանքը սեւացնելու ուղին:

Տես էջ 3

# Ընթացիկ

# Օսկանյանին անձեռնմխելիությունից սխա՞լ էին զրկել

Հայաստանում քաղաքականությամբ զբաղվելն իր մեջ ոչ մի գաղտնիք չի պարունակում: Քաղաքական գործիչները, որոնք մեկումեջ կամ պաշտոնյա են եղել, կամ՝ մեկ իշխանամետ, մեկ՝ ընդդիմադիր, ամենահեշտ նյութն են, որոնց հետ կարելի է խաղալ պլաստիլինի պես՝ սարքելով մեկ հիանալի արձան, մեկ տձեւ զանգված: Մերոնցից ամեն մեկի վրա իշխանությունն այնքան կոմպրոմատ ունի, տնտեսական եւ տարբեր բնույթի այնքան բազմաթիվ լծակներ, որ «քաղաքական» բառն առհասարակ կամաց-կամաց իմաստազրկվում է: Բացառություն չէ Վարդան Օսկանյանը, որին նախ խորհրդարանի նիստով լուրջ-լուրջ զրկեցին անձեռնմխելիությունից, մեղադրեցին փողերի լվացման մեջ, իսկ հիմա, երբ անցել են նախագահական ընտրությունները, եւ նա իրենից որեւէ վտանգ չի ներկայացնում, որեւէ մեկին մրցակից չի կարող լինել այս պահին, «ներել են», համենայն դեպս՝ ըստ ԱԱԾ հաղորդագրության: Ըստ այդ հաղորդագրության՝ Օսկանյանը ցուցմունք է տվել նախաքննական մարմնին եւ խոստովանել, որ Հանթսմանի բարեգործական գումարների 250.795. 26 ԱՄՆ դոլարը օգտագործել է անձնական նպատակներով («Սիվիլիթասի գումարն անգիտակցաբար օգտագործվել է իմ անձնականի համար») եւ պատրաստակամություն հայտնել վճարել դրանից առաջացող հարկային պարտավորության գումարը՝ քննությամբ ֆիքսված գումարը համարելով եկամուտ եւ կատարելով դրանից բխող հարկային պարտավորությունները: Եւ խնդրել է դրանից հետո կարճել քրեական գործի վարույթը եւ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել: Հետաքրքրական է, որ նախաքննական մարմինը Օսկանյանի արարքը վերաորակել է որպես առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու հանցակազմ, եւ քանի որ Օսկանյանը վերականգնել է հարկային պարտավորությունից առաջացած գումարը՝ նրա հանդեպ քրեական հետապնդումը դադարեցվել է:



Մինչդեռ փողերի լվացումը շատ ավելի ծանր մեղադրանք է, ու հաստատ հարկերից չարամտորեն խուսափելու համար պատգամավորական անձեռնմխելիությունից մարդու չէին զրկի: Բայց ամենահետաքրքրականն այն է, որ Վարդան Օսկանյանն էլ իր ալտերնատիվ հայտարարությունն է տարածել՝ շեշտադրելով, որ փողերի յուրացման եւ լվացման ծանր մեղադրանքները հանցակազմի բացակայության պատճառով չկարողանալով ապացուցել՝ ստիպված են եղել գործն այլ ճանապարհով կարճել: Ու նշում է, որ ինքը որեւէ խոստովանություն չի արել եւ ԱԱԾ նամակում էլ գրել է, թե «Սիվիլիթասի» օգտագործման համար նախատեսված Հանթսմանի գումարից ոչ մի լումա չի չարաշահվել, այլ լավ կառավարման արդյունքում դեռ 100 հազար դոլարով էլ ավելացել է: Իսկ ամենակարեւորը՝ Օսկանյանն իր հայտարարության մեջ դառնանում է. «Այս ամենի մեջ ամենակարեւորն այն է, որ ինձ առաջադրված «փողերի լվացման» եւ «փողերի յուրացման» երկու ծանր մեղադրանքները, ինչի արդյունքում ինձ զրկեցին պատգամավորական անձեռնմխելիությունից, հանցակազմի բացակայության պատճառով չեն կարողանում ապացուցել եւ ստիպված են լինում այլ ճանապարհներով գործը կարճել»:

Փաստորեն՝ Վ. Օսկանյանի դեմ քրեական հետապնդումն սկսվեց ընտրական ժամանակաշրջանում, երբ նա կոշտ ընդդիմադիր էր, եւ ավարտվեց հիմա, երբ Հայաստանում բոլորովին այլ կրքեր են եռում, եւ Օսկանյան-քաղաքական գործչի կերպարը ոչ ոքի ոչինչ չի սպառնում: Ու ոչինչ անկանխատեսելի է այս բոլորի մեջ: Ոչինչ նոր: Ամեն ինչ աշխարհի չափ հին է: Ու մի բան էլ՝ կարելի է, չէ՞, քաղաքական գործիչներին վնասազերծելիս գոնե երբեմն, առիթից առիթ այսպես պրիմիտիվ սցենարով չգործել ու հասարակության համար վաղուց կանխատեսելի մոտեցումներից հրաժարվել, ի վերջո հիմա բոլոր ոլորտներում կրեատիվի պահանջ կա: Իսկ արդյոք անհարմար կզգա՞ն մեր պատգամավորները, որոնք դեմքի խելացի արտահայտությամբ կողմ էին քվեարկում Օսկանյանին անձեռնմխելիությունից զրկելու առաջարկին: Չնայած՝ անհարմար զգալը եւս այժմ քաղաքական եւ որեւէ այլ կատեգորիայի չի պատկանում՝ օրենքից դուրս է:

Հետաքրքրական է՝ Օսկանյանը հիմա տարբեր դատական ատյաններով կվիճարկի՞ իրեն առաջադրված նախնական մեղադրանքի օրինականությունը: Չնայած՝ դա հազիվ թե տեղի ունենա, չէ՞ որ մեկտարյա քաշքշուկը հրահրվել է հենց քաղաքական գործչին լռեցնելու համար, ով-ով՝ Օսկանյանը հիմա բոլորից լավ կիմանա, թե որն է չլռելու գինը:

Տխուր է: Այն իմաստով, որ ոչ թե Օսկանյանն է հրեշտակ, կամ մեր մյուս քաղաքական գործիչները, որոնցից ոչ մեկն էլ թերեւս հրեշտակի թեւեր չունի ու բազմաթիվ խառնակ գործերի մասնակից է, այլ այն, որ հանրության մեջ հույսն է կորչում քաղաքականության հանդեպ:

Օսկանյանի գործն ի վերջո նմանվեց Վերահսկիչ պալատի բացահայտումներից շատերին, երբ ֆինանսական ահարկու չարաշահումներ անողները վերականգնում են գումարները ու շարունակում պաշտոնավարել գոհ ու երջանիկ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

## Բորբոքված կրքեր, զայրացած վարորդ

**Չգիտենք՝ ո՞ր շրջանակներն են ուղղորդում տրանսպորտի սակագնի դեմ քաղաքացիական բողոքը, բայց որ ուղղորդվում է՝ վկա են բաժանվող բենզինի կտրոնները, գլխարկները ու վերնազգեստները կամ գունավոր տպված բողոքի պաստառները, որոնք փող արժեն: Թե հիմա բացի քաղաքացիական ակտիվիստների ազնիվ նպատակներից՝ ո՞վ ինչ ձուկ է ուզում որսալ բողոքի այս նոր ալիքի վրա, շուտով պարզ կլինի: Ինչպես եւ այն, թե ինչու հենց այս պահին ծագեց տրանսպորտի թանկացման չհիմնավորված որոշումը, եւ թե ինչպես է այս բոլորը ժամ առ ժամ արժեզրկում քաղաքապետ Տարոն Մարգարյանի ունեցած քաղաքական եւ հանրային ռեսուրսը:**

**Սակայն հայերի թշնամիներն անգամ չէին կարող հասարակությունը բարիկադների բաժանելու այնպիսի առիթ մոգոնել, ինչպիսին տրանսպորտի թանկացումն է: Մի օրինակով ինքներդ եզրահանգեք:**

**Թիվ 41 երթուղու ավտոբուս բարձրացած ակտիվիստը դիմեց ուղեւորներին. «Ժողովուրդ, վճարում ենք 100 դրամ»: Ու ... սկսվեց: Ուղեւորների մի մասը ակտիվիստի կողմն էր, բազմաթիվ արգումենտներ բերեցին, թե ինչու չպետք է 150 դրամ վճարեն: Մյուսներն ասում էին, թե վարորդը մեղք չունի, նրանից պլան են ուզում, ժողովուրդը սխալ տեղ է բողոքում, թող գնա-քաղաքապետարանը պայթեցնի: Մյուսներն ասում էին, որ ամեն ինչի մեղավորը նախագահն է, օլիգարխներին բուծել-բաց է թողել ժողովրդի վրա: Ու խոսում էին բոլորը, մեկը մյուսին չլսելով, ակտիվիստն էլ դեռ մի լավ բորբոքում էր կրքերը: Ի վերջո՝ երիտասարդ վարորդը եւս կատաղեց, ու կանգառ անելուց հետո ամեն անգամ շրջվում ու մեկ րոպե կրքով բանավիճում է, թե վարորդի անունը այս աղմուկ-աղաղակում, բողոքի գործողություններում չպետք է տալ, նա ինչպես ստանում էր 50 հազար դրամ 100 դրամ սակագնի ժամանակ, նույնն էլ այսօր է ստանում, նրա դեմ պետք է չէ ժողովրդին հանել՝ մի քանի վարորդ հիվանդանոցներում են, քանի որ ծեծվել են ուղեւորների կողմից: Իսկ գործադուլ ինքը չի անի, քանի որ ընտանիք է պահում: Այս կարգի կրքերով ավտոբուսն ընթանում էր Ավանից սկսած մինչեւ Վերնիսաժի հասված՝ ամեն րոպե վթարի սպառնալիքը բորբոքված վարորդի առկայությամբ աչքի դեմ:**

**Ընդհանրացումները՝ հետագայում:**

Մ. Խ.

ՄԱՍՍԱՉՈՒՍԵԹՍ

## Պատվավոր կոչում Վարդան Գրիգորյանին

**Բրենդիս համալսարանի սոցիալական քաղաքականության եւ կառավարման «Հելլեր սքուլի» ավարտական հանդիսության ժամանակ Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի նախագահ Վարդան Գրիգորյանին շնորհվել է պատվավոր կոչում, որը նրան դասում է «բարձրագույն կրթության տեսլականի տեր մարդկանց, հումանիստ առարկաների կրքոտ ջատագովի, գիտնականի, պրոֆեսորի եւ առաջնորդի» շարքը, տեղեկացնում է «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի հունիսի 29-ի համարը: Իր շնորհակալական խոսքում կրթության վաստակավոր մշակը հորդորել է ուսանողներին՝ ամեն ջանք գործադրել աշխարհն ավելի լավ վայր դարձնելու համար:**

**Իսկ հունիսի 14-ին նա «Կարնեգի կորպորացիայում» ընդունել է «Գլոբըլ Քիդս» շահույթ չհետապնդող կրթական կազմակերպության անդամներին, որոնց նպատակն է խթանել ուսուցումը եւ արժեւորել գիտելիքը՝ որպես ապագա հաջողությունների գրավականը:**

**Շարունակելով իր հանդիպումները սաների հետ, Գրիգորյանը մի ամբողջ օր էլ անցկացրել է Փրովիդենսում (Ռոուդ Այլենդ) գործող եւ իր անունը կրող տարրական դպրոցում:**

Հ. Ծ.

## «Վճարեք 100 դրամ եւ ժպտալով իջեք»

Մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում բողոքի ցույցեր անող երիտասարդների պաստառների մակագրություններում կա եւս մեկ ուշագրավ կոչ: Պաստառներից մեկի վրա կարդում ենք՝ «Վճարեք 100 դրամ եւ ժպտալով իջեք», ու այստեղ շատ կարեւոր է «ժպտալով» բառը: Այսինքն՝ երիտասարդները ոչ միայն սովորեցնում են ժողովրդին՝ քաղաքացի լինել ու մնալ, այլեւ մի տեսակ մթնոլորտ են փոխում, հասարակական մթնոլորտ՝ կոչ անելով՝ «ժպտալ»:

Դժվար է այս պահին ասել, թե ինչով կավարտվի այս շարժումը: Մի բան ակնհայտ է, այս երիտասարդները այս Հայաստանի քաղաքացի չեն ցանկանում լինել, նրանք իրենց Հայաստանն են ուզում, նրանք ունեն իրենց Հայաստանն ունենալու իրավունքը, եւ նրանց պետք չէ այսօր կոտրել: Մի բան, ի վերջո, պետք է այս ժողովուրդը այս երկրում թույլ չտա, եթե անգամ ժողովուրդը ճիշտ չէ, իսկ ժողովուրդը երբեք չի սխալվում:

Դառնանք «ժպիտ»-ին: Ուրեմն մեզ կոչ են անում ժպտալ: Իսկ կա՞ն մեր քաղաքում ժպիտ առաջացնող բաներ: Ծաղիկները շատացել են, գետնանցումները մաքրվում են, բակային անցումները նկարազարդված են, երիտասարդները՝ գովելի համարձակ են, տրանսպորտը նույնն է, չնայած հիսուն տոկոսով թանկ է, բայց ժպտալու առիթը ո՞րն է: Օրինակ՝ Բաղրամյան պողոտայում տեղակայված Մեծ Բրիտանիայի շենքի պատին, հասկանալի է, բրիտանական դեսպանատան թույլտվությամբ, հնարավոր է անգամ նախաձեռնությամբ, գունավոր տառերով գրվել է՝ «It's boy». հիշեցնենք, երկու օր առաջ բրիտանական թագավորական ընտանիքը համալրվեց արքայազն Ուիլյամի ու Քեյթի տղա առաջնեկով: Եվ ահա բրիտանական դեսպանատունը ավետում է այդ մասին: Բայց, ամենակարեւորը, հնարավոր չէ նայել այդ մակագրությանը ու չժպտալ...



ԽՈՏՈԼՈՒՐ

Խնդիրն այն է, որ այդ մակագրությունը ճիշտ է, Երեւանում է, բայց բրիտանական դեսպանատան պատին է, նախաձեռնությունն էլ մերը չէ: Մեր պատերը մռայլ են, գորշ, տխուր, թախծոտ, էլիտար, բարձրահարկ, մի տեսակ սառը...

Այդուհանդերձ, ընտրությունն իհարկե ձերն է՝ 100 կամ 150 դրամ վճարելու երթուղայինի վարորդին, բայց «ժպտալով իջեք», եւ ոչ միայն՝ իջեք:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

*1-ին էջից*

Եթե դիմումի հեղինակները ցանկանում են Ռուսաստանի հայերի միության գործունեությունն էլ ավելի արդյունավետ դարձնել, ունեն կառուցողական առաջարկություններ, ապա կազմակերպության դռները բաց են՝ ցանկացած ձեւաչափով երկխոսության համար: Բայց դժբախտաբար այդ սնանկ հարցադրումները ցույց են տալիս, որ նրանց մոտեցումները ոչ միայն կառուցողական չեն, այլեւ ժխտողական են: Ասածս ապացուցելու դես գային նման անհեթեթ հայտարարություններով:

Կցանկանայի օգտվել ներկա հարցազրույցի առիթից, հակադարձել իրենց իսկ բարձրացրած խնդիրը եւ հարցնել՝ եթե այդքան տողորված եք Հայոց ցեղասպանության փաստը ժխտողին արձագանքելու խնդրով եւ ունեք անանուն ստորագրահավաք կազմակերպելու փորձ, ապա ինչո՞ւ դուք չփորձեցիք նույն՝ ստորագրահավաք կազմակերպելու միջոցով մեղադրանք ներկայացնել Հայոց ցեղասպանության փաստը՝ «Միջպետական եւ ազգամիջյան հարաբերությունների ամրապնդման գործում ունեցած նշանակալի ավանդի համար»: Իսկ կազմակերպության ղեկավար Արա Աբրահամյանի աշխատանքը բազմիցս գնահատվել է Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության բարձր պարգեւներով:

Բնական է, որ մեր կազմակերպության մեծ հեղինակությունը Ռուսաստանում գործող ադրբեջանական կազմակերպություններին ամենեւին էլ դուր չի գալիս,

# Սնանկ եւ անհեթեթ հարցադրումներ

## *Հարցազրույց Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ Վլադիմիր Աղայանի հետ*

համար բերեմ միայն մեկ օրինակ. դիմումի մեջ մեր կազմակերպությանը փորձում են մեղադրել նաեւ նրա համար, որ ոմն գիտնական Մեյերի՝ Ռուսաստանի «Կուլտուրա» հեռուստաալիքով Հայոց ցեղասպանության փաստը ժխտելու հայտարարությանը չենք արձագանքել: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման ուղղությամբ մեր կազմակերպության կողմից իրականացված ծրագրերի ֆոնին այդ փաստը ոչ մի կարեւոր դերակատարում չի կարող ունենալ, եթե փորձենք անգամ թռուցիկ ներկայացնել կատարվածը:

Ռուսաստանի հայերի միության ստեղծումից անմիջապես հետո կառույցին կից Մոսկվայում ստեղծվեց Միջազգային իրավունքի եւ քաղաքագիտության ազգային ինստիտուտ, որը դարձավ Հայոց ցեղասպանության հարցերի ուսումնասիրման յուրահատուկ կենտրոն: Ինստիտուտի կողմից բազմիցս կազմակերպվել եւ իրականացվել են միջազգային գիտագործնական կոնֆերանսներ, ձեւավորվել է աշխարհի հայտնի ցեղասպանագետներից կազմված փորձագիտական հանձնաժողով, որը երկու տարի շարունակ ուսումնասիրել է Ցեղասպանությանն առնչվող պրոբլեմները եւ նախապատրաստել Հայ դատը միջազգային դատարան ներկայացնելու առաջին լուրջ փաստաթուղթը: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա միության նախագահ Արա Աբրահամյանի ֆինանսական միջոցներով հրատարակվել են մի քանի տասնյակ գրքեր, ինչպես Ցեղասպանության, այնպես էլ Արցախի հիմնահարցի կարգավորման խնդիրների վերաբերյալ: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ է գրավում երջանկահիշատակ Յուրի Բարսեղովի «Հայերի Ցեղասպանությունը. Թուրքիայի պատասխանատվությունը եւ միջազգային հանրության պարտավորությունները» հանրությանը քաջ հայտնի եռահատոր աշխատությունը եւ «Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքում եւ համաշխարհային քաղաքականության մեջ» երկհատորյակը:

Համոզված եմ, որ եթե այդ անհայտ անձինք ձերբազատվեին ալարկոտությունից եւ ուսումնասիրեին կազմակերպության գոնե միայն այդ ուղղությամբ կատարած աշխատանքը, դժվար թե գրիչ վերցնեին ձեռքերը եւ հանդես գային նման անհեթեթ հայտարարություններով:

... սը ժխտող գիտնականին եւ ստիպել, որ նա հրապարակայնորեն ներողություն խնդրի մեր ժողովրդից: Ինչո՞ւ չէիք անում, ո՞ւմ էիք սպասում, թե՞ սովորել եք միայն ուրիշի ձեռքերով շագանակ հանել կրակից: Ակնառու է, որ այս անանուն անձինք հեռու են եւ անտարբեր հայոց հոգսերից, ուստի եւ մեր կազմակերպությունը որեւէ ընդհանուր բան չի կարող ունենալ նրանց հետ:

**- Պրն Աղայան, Ձեր կարծիքով ի՞նչ նպատակ են հետապնդում այս դիմումի հեղինակները:**

- Քանի որ հայտնի չէ դիմումի հեղինակների (կամ միգուցե հեղինակի, չգիտենք) ով լինելը, դժվարանում եմ խոսել նրանց նպատակների մասին: Բայց մի բան հստակ է. նրանք իրենց վերաբերմունքով ոչ թե օգնում են կազմակերպությանը, այլ ջուր են լցնում առաջին հերթին Ռուսաստանում գործող ադրբեջանական կառույցների ջրաղացին: Ասեմ թե ինչու...

Ռուսաստանի հայերի միության ստեղծումը հարյուրամյակի նոր մարտահրավերներին դիմակայելու թելադրանք էր, նպատակ հետապնդելով ներհամայնքային համախմբումից անցնել վերհամայնքային համախմբման: Կառույցը ինքնակազմակերպման, համախմբման, կազմակերպական-ինստիտուցիոնալ որակապես նոր կառույց է, որը իր գործունեության ընթացքում դարձել է հետեւողականության, ավանդապահության եւ նոր օրվա բացահայտումների միաձուլման ակնառու օրինակ: Ահա թե ինչու մեր կազմակերպությունը մեծ հեղինակություն է վայելում Ռուսաստանի հասարակական, քաղաքական կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների միջավայրում, իր գործունեությամբ նպաստելով ոչ միայն Ռուսաստանում բնակվող հայության աշխատանքային, կրթամշակութային, իրավական շահերի պաշտպանությանը, այլեւ հայ-ռուսական հարաբերությունների, երկու ժողովուրդների դարավոր բարեկամության էլ ավելի խորացմանը: Եվ միանգամայն օրինաչափ է, որ Ռուսաստանի Կենսագրական ինստիտուտը ազգային մրցանակաբաշխության «Տարվա կազմակերպություն-2012» անվանակարգում հաղթող ճանաչեց «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպությանը՝ ...

... նրանք կցանկանային եւ կասկածից վեր է, որ փորձում են սեպ խրել հայ-ռուսական օրեցօր խորացող հարաբերությունների մեջ: Ուստի այդ դիմումում բերված անհիմն հարցադրումների հեղինակները նպաստ են բերում այդ կազմակերպությունների գործունեությանը: Դրանում համոզվելու համար խորհուրդ կտայի ծանոթանալ թուրք-ադրբեջանական կայքէջերին:

Այստեղ եւս ավելորդ չեմ համարում նշել, որ մեր կազմակերպությունը միշտ կոչ է արել բոլոր նրանց, որոնք մտահոգված են մեր համազգային խնդիրներով, միասնական ճակատով պայքարել դրանք լուծելու համար: Միասնության պառակտման ամեն մի փորձ հակասում է մեր ազգային շահերին եւ անասելի չափով վնասում է մեզ: Եվ հրոք, այստեղ մենք սխալվելու իրավունք չունենք, որովհետեւ մեր սխալներին սպասողներ դեռեւս շատ կան...

**- Պրն Աղայան, քանի որ դիմումի հեղինակները մի շարք պահանջներ են ներկայացնում կազմակերպությանը, ապա կցանկանայինք լսել Ձեզ, թե ինչ է արվել անցած տասներեք տարիների ընթացքում:**

- Ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման եւ դատապարտման ուղղությամբ իրականացվող մեր կատարված աշխատանքների մասին ես փորձեցի հիշատակել ոչ թե նրա համար, որ հաշվետու ենք անանուն անձանց, այլ միայն այդ դիմումում առաջադրված հարցերի սնանկությունն ապացուցելու համար: Ուստի ներկա առիթով մեր կողմից իրականացվող այլ ծրագրերի վերաբերյալ ես Ձեր հարցին չեմ պատասխանի: Նախ նրա համար, որ ՌՀՄ գործունեությանը քաջ տեղյակ են թե՛ Հայաստանի եւ թե՛ Ռուսաստանի լայն հասարակությունը եւ հատկապես ռուսահայերը, եւ երկրորդ, չեմ ուզում անանուն, անհիմն, անպատասխանատու հարցադրումների հեղինակներին պատասխանել: Ելնելով այս ամենից՝ խորհուրդ եմ տալիս ստորագրահավաքի հեղինակներին այսուհետեւ քաջություն ունենալ սեփական անվամբ հանդես գալու եւ ասել միայն ճշմարտությունը:

Իսկ բոլոր նրանց, ում հետաքրքրում է ՌՀՄ գործունեությունը, ապա ամբողջական տեղեկատվություն կարող են ստանալ նաեւ համացանցից եւ ՌՀՄ պաշտոնական կայքէջից:

---

ՋԱՆՔԵՐ ՃԻՇՏ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

# Նորից կդառնա՞նք արդյունաբերական երկիր

## *Հայաստանի արդյունաբերության ծավալները 12 տարում աճել են գրեթե 4 անգամ*



Հայաստանի՝ խորհրդային տարիներին արդյունաբերական երկիր լինելու փաստը ոչ ոք չի վիճարկում: Անկախության հատկապես առաջին տարիներին մեր արդյունաբերությունը, ցավոք, լուրջ, որոշ դեպքերում անդառնալի կորուստներ կրեց: Դա ուներ ինչպես օբյեկտիվ պատճառներ՝ խորհրդային երկրի փլուզում, տնտեսական կապերի խզում, շրջափակում, երկրաշարժ, այնպես էլ սուբյեկտիվ՝ այդ տարիների իշխանությունների անձեռնահասություն եւ արդյունաբերության նկատմամբ արհամարհական վերաբերմունք: Միայն 90-ականների կեսերից արդյունաբերության, մասնավորապես սննդարդյունաբերության վերականգնման ուղղությամբ առաջին լուրջ քայլերն արվեցին: Սկսած 2000-ից, արդյունաբերության աճը դարձավ ավելի առարկայական, որոշ տարիներին դառնալով երկնիշ:

2000-ին արդյունաբերական արտադրանքը կազմել է մոտ 300 մլրդ դրամ: 5 տարի հետո այդ ցուցանիշը կրկնապատկվեց՝ հասնելով 651 մլրդ դրամի: Ընդ որում, 2002-ին եւ 2003-ին արդյունաբերության աճը երկնիշ էր եղել՝ 14,6 տոկոս եւ 15,1 տոկոս: Սակայն 2006-ին արդյունաբերությունում անկում գրանցվեց: Դրան հաջորդող բոլոր տարիներին, մինչեւ 2012-ը, արդյունաբերությունն աճ էր արձանագրում, բացառությամբ ճգնաժամային 2009-ի, երբ այս ճյուղում անկումը կազմեց 7,5 տոկոս: Այդուհանդերձ, 2012-ին Հայաստանի արդյունաբերական արտադրանքի ծավալները գերազանցեցին 1 տրլն դրամը, կազմելով 1 տրլն 120 մլրդ դրամ: Սա նշանակում է, որ վերջին 12 տարում Հայաստանի արդյունաբերությունն աճեց գրեթե 4 անգամ: Շա՞տ է սա, թե՞ քիչ:

Եթե նման աճ արձանագրվեր որեւէ զարգացած երկրում, ապա այս ցուցանիշն ուղղակի ֆանտաստիկ կարող էր համարվել: Սակայն եթե նկատի ունենանք, թե ինչ փլուզված վիճակ էր Հայաստանում 90-ականներից հետո, ապա արձանագրված աճը այդպիսին չի կարող համարվել: Մյուս կողմից էլ, հարկ է ընդգծել, որ նման աճ ունենալը մի երկրի համար, որը չունի հարուստ հումքային պաշարներ եւ դրա վրա հիմնված տնտեսություն, հիրավի բավականին լավ ցուցանիշ է:

Ինչ վերաբերում է 2013-ին, ապա վերջին 2 տարիների դրական միտումը շարունակվում է: Հունվար-մայիս ամիսներին Հայաստանում թողարկվել է 464 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք, ինչը 8 տոկոսով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Հավանական է թվում, որ այս տարի արդյունաբերության աճը կպահպանվի գոնե այս մակարդակի վրա:

Հետաքրքրական է, թե ինչպե՞ս է փոխվել արդյունաբերության կառուցվածքը Հայաստանում: Խորհրդային տարիներին Հայաստանի արդյունաբերության հիմնական ճյուղերն էին մեքենաշինությունը, թեթեւ արդյունաբերությունը, սննդի արդյունաբերությունը, շինանյութերի արդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան:

Այժմ արդյունաբերական արտադրանքի գերակշիռ մասը մշակող արդյունաբերությունն է՝ հիմնականում սննդամթերքի արտադրությունը, հետո էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու մատակարարումը, ապա հանքարդյունաբերությունը: Վերոնշյալից թերեւս երեւում է, թե ինչպիսի անդառնալի կորուստներ է կրել մեր արդյունաբերությունը: Այնպիսի հզոր ճյուղեր, ինչպիսին են մեքենաշինությունը, թեթեւ արդյունաբերությունն ու քիմիական արդյունաբերությունը, այսօր որպես այդպիսին գոյություն չունեն: Յուրաքանչյուր ճյուղում լավագույն դեպքում հզորությունների փոքր ծավալով աշխատում են մի քանի ձեռնարկություններ:

Միեւնույն ժամանակ, հիշեցնենք, որ Հայաստանի կառավարությունը ընդունել եւ սկսել է իրագործել արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը, նպատակ ունի «պետություն-մասնավոր» համագործակցության միջոցով զարգացնել Հայաստանի արդյունաբերության 11 ճյուղեր՝ կոնյակագործությունը, գինեգործությունը, պահածոների, հյութերի, ջրերի արտադրությունները, ադամանդագործությունը, ոսկերչությունը, ժամացույցների արտադրությունը, ճշգրիտ ճարտարագիտությունը, դեղարտադրությունը, տեքստիլ արտադրությունը: Մնում է միայն հուսալ, որ արդյունաբերության զարգացման քայլերը կբերեն ցանկալի արդյունքի, եւ Հայաստանը վերստին կհամարվի արդյունաբերական երկիր՝ դրանից բխող դրական հետեւանքներով երկրի եւ բնակչության համար:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

## Հաշվարկ հրատապ թեմայով

# Ուղեվարձի բարձրացումը գերշահույթները պահպանելու համար է

*1-ին էջից*

Ուստի մեկ օրվա ընթացքում աշխատող միկրոավտոբուսների թիվը մենք պայմանականորեն ընդունենք 1700 (այս թիվը ստացվում է համամասնորեն, ելնելով ավտոբուսների թվի ցուցանիշներից- 578 ավտոբուսից գիծ է դուրս գալիս 370-ը, ուստի նույն տրամաբանությամբ 2.7 հազար միկրոավտոբուսից գիծ դուրս կգա 1700-ը): Եթե այս թիվը մոտ է իրականությանը, ապա միկրոավտոբուսների սպասարկած ուղեւորների թիվը տարվա կտրվածքով կկազմի` 365*1700*400, կամ 248.200.000: Կատարված հաշվարկներում վիճելի է այն հանգամանքը, թե արդյոք գծատերերը միատեսակ պլան են պահանջում ավտոբուսի եւ միկրոավտոբուսի վարորդներից, սակայն եթե անգամ այդ թվերը տարբեր են (նկատի ունենալով ավտոբուսի ավելի մեծ տարողությունը, ապա դա միայն ցույց է տալիս, որ փոխադրվող ուղեւորների քանակը, հետեւաբար նաեւ գծատերերի հասույթը շատ ավելի մեծ է:

Այսպիսով` տարվա կտրվածքով Երեւան քաղաքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով (միկրոավտոբուսներով եւ ավտոբուսներով) տեղափոխվում է մոտավոր գնահատականով շուրջ 302.220.000 մարդ: Սա միանգամայն իրատեսական թիվ է. դա նշանակում է, որ Երեւան քաղաքում միջին վիճակագրական մարդը տարվա 365 օրվա ընթացքում միջինը 232 անգամ նստում է երթուղային տաքսի (երեւանի բնակչության թիվը ընդունենք 1,3 մլն մարդ, իհարկե այս թվից պետք է հանել կույրերին, հաշմանդամներին,անձնական մեքենա ունեցող անձանց, որոնք չեն կարող կամ պատճառներ չունեն երթուղային տաքսիներից օգտվելու, դրանց կողքին նաեւ մեր հարգարժան չինովնիկներին, մեծահարուստներին:

Սակայն թեկուզ մոտավոր հաշվարկված եւ ճշգրտման ենթակա 302.220 հազարը արդեն իսկ խորհելու առիթ է տալիս: Ստորեւ բերված է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղեւորափոխադրումների ծավալը` Երեւան քաղաքում` հիմք ընդունելով պաշտոնական վիճակագրության տվյալները:

| հունվար-դեկտեմբեր | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 |
|---|---|---|---|---|---|---|---|
| ք. Երեւան, հազար մարդ | 175708,9 | 185454,9 | 175824,5 | 174534,9 | 175529,1 | 174014,2 | 177115,5 |

**Աղյուսակ 1-** *ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղեւորափոխադրումների ծավալը երեւան քաղաքում*

Աղյուսակի ցուցանիշների մեջ ներառված է նաեւ տաքսի ծառայությունների փոխադրած ուղեւորների թիվը, քանի որ Ազգային վիճակագրական ծառայության կողմից չեն տրամադրվում տաքսի ծառայությունների փոխադրած ուղեւորների քանակը Երեւան քաղաքում առանձին (որպեսզի աղյուսակի տվյալներից հանելով այդ թիվը մենք ճշգրիտ ստանայինք, թե որքան է կազմել գծատերերի փոխադրած ուղեւորների քանակը): Սակայն ընդհանուր ծավալում տաքսիների փոխադրած ուղեւորների տեսակարար կշիռը անհամեմատ ցածր է, մասնավորապես 2012 թվականին ամբողջ հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով տեղափոխվել է 225560,7 հազար մարդ, որից տաքսիների բաժինը կազմում է 17700,2 կամ 7,8 տոկոսը: Այսպիսով` Երեւանում գծատերերի հասույթի ցուցանիշները, որը նրանք ներկայացնում են պաշտոնական մարմիններին, ներկայացված են աղյուսակ 1-ում, մի վերապահումով, որ դրանք ներառում են նաեւ տաքսիների ցուցանիշները. վերջիններս իրենց փոքր բաժնեմասով չեն կարող էականորեն անդրադառնալ մեր հաշվարկի վրա, ավելին, հաշվարկի հիմք ընդունելով աղյուսակի ցուցանիշները` մենք փոքր-ինչ կավելացնենք այն պաշտոնական փոխադրված ուղեւորների թիվը, որ գծատերերը ներկայացնում են պետությանը:

Բերված ցուցանիշները մատնացույց են անում տրանսպորտի ոլորտում առկա ստվերային շրջանառությունը: 2012 թ. հունվար դեկտեմբերին պաշտոնական տվյալներով գծատերերի կողմից տեղափոխվել է 177 115.5 հազար մարդ, իսկ կատարված պարզ հաշվարկներով այդ իրական թիվը 302 220 հազար է: Եթե մեր կողմից կատարված հաշվարկները ճիշտ են, իսկ հակառակը ենթադրելու հիմքեր չկան, բացի այն, որ գծատերերի իրական հասույթը կարող է ավելի մեծ լինել, ապա Երեւան քաղաքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտում ստվերային շրջանառությունը կազմում է (302220-177115.5)/177115.5= 70.6 տոկոս: Այս թիվը միանգամայն իրատեսական է եւ անուղղակիորեն հաստատվում է նաեւ այլ տվյալներով: Տարբեր գնահատականներով մեր երկրում տնտեսության ընդհանուր ստվերային շրջանառությունը կազմում է 30-60 տոկոս: Հաշվի առնելով վերջին ցուցանիշը, ինչպես նաեւ տրանսպորտի ոլորտում մոնոպոլ վիճակը (այս վերջին պնդումը կարելի է ապացուցել տնտեսական օրենքներով, օբյեկտիվորեն: Մասնավորապես հայտնի է, որ մոնոպոլ կառուցվածք ունեցող ցանկացած շուկա բնութագրվում է մոնոպոլ բարձր գնով եւ ապրանքային (ծառայությունների) դեֆիցիտով. վերջինս անհրաժեշտ է, որպեսզի գինը զգալիորեն բարձր սահմանվի ֆիրմայի սահմանային ծախսերից: Այն, որ տրանսպորտի ոլորտում Երեւանում եւ ամբողջ երկրում առկա է տրանսպորտային ծառայությունների դեֆիցիտ, նկատի ունենալով կարտոֆիլի պարկերի պես տեղափոխվող ուղեւորներին, կարող է հերքել միայն տեսողության պրոբլեմներ ունեցող մարդը: Ապրանքային դեֆիցիտ կարող է առաջանալ նաեւ ավելի մրցակցային շուկաներում, սակայն միայն որոշ կարճ ժամանակով` սպառման կտրուկ ավելացման հաշվին, սակայն տրանսպորտի բնագավառում ծառայությունների դեֆիցիտը գոյություն ունի արդեն տարիներ, որը ակնհայտորեն հետեւանք է այս ոլորտում մոնոպոլ կարգավիճակի, շուկա մուտքի արգելքների, կարելի է պնդել, որ որ 70,6 տոկոսը բավարար ճշգրտությամբ բնութագրում է իրականությունը:

Գծատերերի ներկայացրած հաշվարկները, թե իբր մեկ ավտոբուսի հաշվով ծառայության ինքնարժեքը կազմում է 149.8 դրամ, իսկ մեկ միկրոավտոբուսի հաշվով 144.9 դրամ (խոսքը մեկ ուղեւորի հաշվով ինքնարժեքի մասին է)` դրանով հիմնավորելով 150 դրամ սակագնի անհրաժեշտությունը եւ տպավորություն ստեղծելով, թե գծատերերը անգամ սակագնի բարձրացման դեպքում աշխատելու են նվազագույն շահույթով, որը միայն կարող է իրեն թույլ տալ ամենաազնիվ բիզնեսմենը, չեն դիմանում որեւէ քննադատության: Եթե մի պահ հավատանք, որ այդ ցուցանիշները մոտ են իրականությանը, ապա ստացվում է, որ մինչեւ հիմա գծատերերը, որոնք մասնավոր կազմակերպություններ են, աշխատել են վնասով (թան էլ չէ, փրթած մածուն)` ուղեւորներից գանձել են 100 դրամ, այն դեպքում, երբ նրանց ծախսը մեկ ուղեւորի հաշվով 140 դրամից ավելի է եղել: Այս դրույթը հակասում է առողջ բանականությանը: Հնարավոր է, որ այսպիսի հաշվարկը կարելի լիներ հրամցնել ամենդյուրահավատ քաղաքացիներին, եթե խոսքը գնար պետական սեփականությամբ ընկերությունների մասին` պատճառաբանելով, որ վնասը մինչեւ հիմա փոխհատուցվում էր պետության կողմից` դոտացիաների ձեւով: Սակայն, կրկնում եմ, խոսքը ՄԱՍՆԱՎՈՐ կազմակերպությունների մասին է:

Նույնիսկ պաշտոնական վիճակագրական ցուցանիշները բացահայտում են ներկայացված ինքնարժեքի հաշվարկի սխալականությունը: Այսպես, համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2007-2011 թթ.-ին ուղեւորների փոխադրումից ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի հասույթը եւ ծախսերը Հայաստանում ունեցել են հետեւյալ տեսքը (տես աղյուսակ 2).

| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 |
|---|---|---|---|---|---|
| հասույթ, մլն դրամ | 36875,4 | 37311,1 | 37910,7 | 39067,9 | 38029,1 |
| ծախսեր, մլն դրամ | 31927,9 | 33164 | 35035,9 | 37088,8 | 35210,1 |

**Աղյուսակ 2.** *ուղեւորների փոխադրումներից հասույթը եւ ծախսերը ավտոմոբիլային կազմակերպություններում (առանց թեթեւ մարդատար տաքսիների եւ առանց դոտացիաների) 2007-2011 թթ.*

Նշված ամբողջ ժամանակահատվածում գծատերերը, իրենց իսկ ներկայացրած տվյալներով (պետք է ենթադրել, որ պետությունից ուղեւորների իրական թիվը թաքցնելով ստացված օգուտները շատ ավելի են եղել) աշխատել են շահույթով` հասույթը միշտ գերազանցել է ծախսերին: Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչ էական կառուցվածքային փոփոխություններ են տեղի ունեցել, որ ներկայումս երթուղային տաքսիների ինքնարժեքը անցնում է 140 դրամից եւ նախկին 100 դրամով աշխատելը դարձել է անհնար: Սա բացատրելու համար գծատերերի ներկայացուցիչները, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչությունը (առաջին հայացքից քաղաքապետարանը, այլ կերպ ` հանրության շահը ներկայացնող մարդիկ պետք է հակադրվեին եւ կասկածի տակ առնեին գծատերերի բերած փաստարկները, սակայն այդպիսի հակադրություն նրանց միջեւ չկա) բերում են հետեւյալ հիմնական պատճառաբանությունները.

▼ գազի գնի բարձրացումը,
▼ ներգրավվող հիմնական միջոցների, ներկրվող միկրոավտոբուսների եւ ավտոբուսների թիվը, այլ կերպ` ամորտիզացիոն հատկացումների ավելացումը:

Թանկացումն արդարացնող փաստարկների թվում նշվում է նաեւ ամառվա ամիսներով պայմանավորված ուղեւորահոսքերի նվազումը, փաստարկ, որի վրա կարելի է ծիծաղել եւ անցնել առաջ: Մի՞թե սեպտեմբերին, երբ այդ ուղեւորահոսքերը վերականգնվեն, երթուղային տաքսու գները կրկին 100 դրամ են սահմանվելու: Նմանապես գծատերերը կարող են նաեւ այլ ծիծաղելի փաստարկներ բերել, ինչպես օրինակ` վարորդներին բարձր աշխատավարձ վճարելու անհրաժեշտությունը (սա ամենածիծաղելին էր), ծառայության որակը բարելավելը եւ այլն, սակայն ուշադրության արժանի փաստարկները ըստ իս, վերը նշված երկու կետերում են:

Գազի գնի բարձրացման փաստարկին նախ կարելի է առարկել, որ ոչ բոլոր տրանսպորտային միջոցներն են գազով աշխատում, օրինակ` ավտոբուսները: Սակայն ամենաէական հակափաստարկը հետեւյալն է: Ստորեւ բերված աղյուսակում ներկայացված է գազի գնի դինամիկան:

| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 |
|---|---|---|---|---|---|
| բնական գազ 1 մ3 դիմաց, դրամ | 59 | 84 | 96 | 132 | 132 |

**Աղյուսակ 3.** *գազի գինը Հայաստանում 2007-2011 թթ.:*

Ես կցանկանայի գծատերերին հարցնել, թե որ տրամաբանությամբ է գազի գնի 20 տոկոս աճը հանգեցրել 50 դրամով սակագինը բարձրացնելու անհրաժեշտության, եթե, համաձայն վերը բերված աղյուսակի, տվյալների 2010-2011 թթ. գազի սակագինը 2007-ի նկատմամբ աճելով (132-59)/59*100 =124 տոկոսային կետով, այնուամենայնիվ թույլ է տվել, որ դուք 2010-2011 թթ. տարին փակեք շահույթով (տես աղյուսակ 2-ը): Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ծախսերը 2007- 2010 թթ շարունակաբար աճել են տարեկան շուրջ 1,2-ից 2 մլրդ դրամով (նկատենք, որ հասույթը եւս ավելացման միտումներ է ունեցել), սակայն ոչ մի վնասով գործելու մասին խոսք լինել չի կարող: Ինչպե՞ս է պատահում, որ գազի գնի կրկնակի թանկացումը 2010-2011 թթ. թույլ է տալիս շահույթով աշխատել, սակայն 2013 թ.-ի նույն գնի քառորդ մասով թանկացումը ինքնարժեքը հասցրել է 140 դրամից ավելի մակարդակի: Ընդ որում մենք հաշվարկի հիմք ենք ընդունում պաշտոնական տվյալները, այսինքն` մի կողմ ենք դնում այն, որ դուք, անկասկած ներկայացնում եք արհեստականորեն նվազեցված հասույթ եւ ուռճացված ծախսեր:

Երկրորդ պատճառաբանությանը պատասխանելու համար հարկավոր է հաշվի առնել, թե որքան գումար է անհրաժեշտ տրանսպորտային կազմակերպության հիմնական միջոցների, մասնավորապես միկրոավտոբուսների եւ ավտոբուսների պարզ վերատադրություն կատարելու համար: Ինչպես նշեցինք սկզբում, Երեւանում առկա են 2,7 հազար միկրոավտոբուս, 578 ավտոբուս: Նշված տրանսպորտային միջոցների օգտակար ծառայության նվազագույն ժամկետը 5 տարի է: Նկատենք, որ այստեղ եւս մենք վերանում ենք այն իրողությունից, որ հարգարժան գծատերերը օգտագործում են մաշված եւ իրենց դարն ապրած հիմնական միջոցներ, որոնք արդեն վաղուց հետ են գնվել նախկինում կատարված ամորտիզացիոն հատկացումների շնորհիվ: Սակայն ենթադրենք, թե գծատերերը կատարում են տրանսպորտային միջոցների պարզ վերատադրություն: Այս դեպքում 2,7 հազար միկրոավտոբուս ունենալու համար, հաշվի առնելով 5 տարի օգտակար ծառայության ժամկետը, գծատերերը տարեկան պետք է ձեռք բերեն 2,7հազ/ 5= 540 միկրոավտոբուս, ավտոբուսների մասով` 115 ավտոբուս: Մեկ նոր միկրոավտոբուսի շուկայական գինը 20-ից 22 հազար դոլար է, ավտոբուսինը` 55-60 հազար դոլար: Ուստի ստանում ենք 540*20 000+115*55 000= 10800+6325=17125 հազար դոլար (մենք վերցնում ենք հիմնական միջոցների նվազագույն գները, քանի որ եթե դուք այդպես լավ նվնվում եք ձեր սեփական ժողովրդի առաջ, ապա կկարողանաք նույնքան հրաշալի սակարկել ավտոգործարանների հետ, չէ որ հարցը վերաբերում է ձեր անձնական շահին): ԱՄՆ դոլարի 400 դրամ պայմանական փոխարժեքի կուրսի դեպքում նշված գումարը կկազմի 6 մլրդ 850 միլիոն դրամ, որն, ի դեպ, կազմում է պետությանը ներկայացրած ձեր ծախսերի համեմատությամբ ոչ նշանակալի գումար` 2011 թվականին օրինակ, ձեր ծախսերը կազմել են 35 մլրդ 210 մլն դրամ (իհարկե կան նաեւ հիմնական միջոցների մաքսազերծման եւ տեղափոխման ծախսեր, սակայն դրանք հարցի էությունը չեն փոխում): Եվ սա, կրկնում եմ, այն դեպքում, եթե դուք տարեկան ներկրեիք 540 նոր միկրոավտոբուս եւ 115 ավտոբուս, մի բան, որը ակնհայտորեն չի կատարվում, նկատի ունենալով երթուղային գծերում հնացած ու շարքից դուրս եկած տրանսպորտային միջոցների առկայությունը: Դեռ կարելի էր ավելացնել լիզինգի կիրառման հնարավորությունները` հիմնական միջոցների գումարը մաս-մաս փակելու համար, սակայն, կարծում եմ, վերը բերված հակափաստարկները լիովին բավարար են փոշիացնելու ինքնարժեքի այն ստահոդ հաշվարկները, որոնցով փորձում են մոլորեցնել հանրային կարծիքը: Մնում է հարցնել, թե ինչ 35 մլրդ դրամի ծախսեր է, որ կատարում եք դուք:

Որն է, այդ դեպքում, թանկացման իրական պատճառը: Ակնհայտ է, որ վառելիքի գների վերջին տարիների թանկացումները, նոր հիմնական միջոցների ձեռքբերման անհրաժեշտությունը (90-ական թթ. վաղուց են անցել, որ մարդիկ բավարարվեն կեղտոտ, իրենց դարը վաղուց ապրած ՌԱՖ-երով ու «Երազ»-ներով) ստիպել են գծատերերին հրաժարվել իրենց ահռելի շահույթների մի մասից: Իսկ նախկին երանելի ժամանակները վերադարձնելու համար հարկավոր է գոյության խնդիր լուծող ժողովրդի վզին փաթաթել եւս 50 դրամ:

Հաշվի առնելով վերը բերված փաստարկները, առաջարկում եմ տրանսպորտի վարչության պատասխանատուներին` հանգամանալից եւ օբյեկտիվ հետազոտություն անցկացնել տրանսպորտային ընկերություններում եւ թույլ չտալ սակագնի բարձրացումը. եթե մարդկանց շահի համար անհրաժեշտ է հարվածել մի քանի օլիգարխի եւ մի փոքր կրճատել նրանց դրամապանակները, եթե անհրաժեշտ է, որ գծասիրոջ երեխան պակաս թանկարժեք մեքենաներ քշի, որպեսզի սովորական երեխան երթուղայինով կարողանա դպրոց գնալ, ապա դա անպայման պետք է անել հանուն բոլոր սրբերի:

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Կոզլարիչն առաջարկել է Ադրբեջանը «դարձնել Եգիպտոս»

Նախագահական ընտրությունների մոտենալուն հետ Բաքվի իշխող վարչախումբը մեծացնում է արտաքին քաղաքական աջակցություն ստանալու ջանքերը: Վերջերս Վաշինգտոն էր մեկնել Ադրբեջանի խորհրդարանական պատվիրակությունը՝ Միլլի մեջլիսի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Սամադ Սեիդովի գլխավորությամբ: Ըստ երեւույթին, դրա արդյունք պիտի համարել տեղեկությունը, թե «ԱՄՆ 49 կոնգրեսական արդեն աջակցություն է հայտնել Իլհամ Ալիեւին, այդ խմբի հետ աշխատանքները շարունակվում են»:

Վաշինգտոնից, այդուհանդերձ, Իլհամ Ալիեւը միայն դրական ազդակներ չէ, որ ստանում է: «Ամերիկայի ձայնի» ադրբեջանական ծառայությունը հարցազրույց է ունեցել Բաքվում ԱՄՆ նախկին դեսպան Ռիչարդ Կոզլարիչի հետ: Վերջինս ընդգծել է, որ «մի կողմից նավթային բումը բերել է Ադրբեջանում չտեսնված տնտեսական զարգացման, փոխվել է Բաքվի տեսքը... մյուս կողմից քաղաքական գործընթացներում ռեգրեսը հասել է մի մակարդակի, երբ չի կարելի ակնկալել, որ հոկտեմբերին կանցկացվեն ազատ եւ արդար ընտրություններ»: Այդ մասին հաղորդել է «Թուրան» լրատվական գործակալությունը:

Նախկին դեսպանն անդրադարձել է նաեւ Ադրբեջանում ընդդիմության միավորման եւ Ռուստամ Իբրահիմբեկովին նախագահի թեկնածու առաջադրելու թեմային: «Միասնական թեկնածուի առաջադրումը առաջընթացի նշան է, բայց հայտնի չէ՝ կկարողանա՞ Իբրահիմբեկովը վերադառնալ Ադրբեջան, նրան թույլ կտա՞ն մասնակցել ընտրություններին: Էությամբ ես հոռետես եմ: Ընդդիմության միավորումը լավ է, բայց որպեսզի դա առաջընթաց համարվի, անհրաժեշտ է, որ նա կարողանա ընտրություններին մասնակցել իր միասնական թեկնածուով: Բայց ես դրան նայում եմ հոռետեսության որոշակի չափաբաժնով»,- ասել է Բաքվում ԱՄՆ նախկին դեսպանը:

Պատասխանելով հարցին, թե «ի՞նչ է պատրաստվում անել ԱՄՆ-ը, որպեսզի Ադրբեջանում ժողովրդավարություն լինի», Կոզլարիչը պատասխանել է, որ «Ադրբեջանում Միացյալ Նահանգները պետք է բռնի այնպիսի դիրք, ինչպես Եգիպտոսում»: Նա նաեւ մանրամասնել է միտքը. «... Մենք իրավունք չունենք լռելու Ադրբեջանում խախտումների մասին»:

Նախկին դեսպանն արտահայտում է զուտ անձնակա՞ն, թե՞ նաեւ ԱՄՆ վարչակազմի վերաբերմունքին մոտ տեսակետ, կարելի է ենթադրել իրողությունից, որ անցած շաբաթ ադրբեջանական ընդդիմության մի խումբ ներկայացուցիչներ, ինչպես լրագրողներին ասել է այսպես կոչված Ժողովրդավարական ուժերի ազգային խորհրդի գործադիր ղեկավար Էլդար Նամազովը, «մի շարք պաշտոնական հանդիպումներ են ունեցել ԱՄՆ Կոնգրեսում եւ պետական դեպարտամենտում, որոնց ընթացքում քննարկվել են Ռուստամ Իբրահիմբեկովին նախագահի թեկնածու առաջադրելու հետ կապված հարցեր»:

Վաշինգտոնում կարծես Ադրբեջանի հետ աշխատում են «երկու ճակատով»՝ ընդունում են և՛ իշխող վարչախմբի, և՛ ընդդիմության ներկայացուցիչներին: Ըստ երեւույթին, Սպիտակ տունը ձեռնպահ է մնում ընդդիմությանը բացահայտ աջակցելուց, բայց վերջինիս հաստատակամության դեպքում, բացառված չէ, Օբամայի կառավարությունը կարող է Ադրբեջանին վերաբերվել «այնպես, ինչպես Եգիպտոսին»:

«Ազգ»-ի երեկվա համարում, ի դեպ, մենք գրել էինք, որ «Ռուստամ Իբրահիմբեկովը կձերբակալվի, հենց որ ոտք դնի Ադրբեջանի սահմանին»: Երեկ Ռուստամ Իբրահիմբեկովն անդրադարձել է այդ հարցին. «Ինձ ուզում էին վախեցնել, բայց ես կվերադառնամ Բաքու»,- վստահորեն հայտարարել է նա (տես http://haqqin.az/news/7753): Միաժամանակ, «Թուրան» գործակալությանը «եվրոպական աղբյուրներից հայտնի է դարձել, որ Իբրահիմբեկովը մոտակա օրերին կավարտի եվրոպական հանդիպումները եւ կմեկնի Մոսկվա, այնտեղից՝ Թբիլիսի»:

Նույն աղբյուրների հավաստմամբ՝ Իբրահիմբեկովը Թբիլիսի- Բաքու չվերթով Ադրբեջան կուղեւորվի հուլիսի 31-ին: «Թուրան» գործակալության այս տեղեկությունը Ժողովրդավարական ուժերի ազգային խորհրդում, որի նախագահն է Ռուստամ Իբրահիմբեկովը, հաստատել են: Մնում է սպասել իրադարձությունների հետագա ընթացքին, եթե, իհարկե, տարածված տեղեկատվությունն իրականությանը համապատասխանում է: Ստույգ է թերեւս միայն այն, որ երեկ Իբրահիմբեկովը եղել է Բրյուսելում:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**



# ՉԺՀ-ում 5 տարով արգելվեց վարչական շենքերի կառուցումը

**Չինաստանի իշխանությունները ամեն տեսակի վարչական շենքերի կառուցման հնգամյա արգելք են սահմանել, հաղորդում է Սինհուա գործակալությունը:**

**Համապատասխան ղեկավար հրահանգ են տվել ՉԺՀ Պետխորհուրդը եւ Կոմկուսի կենտկոմը: Վարչական շենքերից բացի՝ արգելքը տարածվում է նաեւ պետության հաշվին ամեն տեսակի թանկարժեք շինությունների, այդ թվում՝ հյուրանոցների եւ ուսումնական կենտրոնների, կառուցման վրա:**



**Հրահանգը բոլոր կուսակցական եւ կառավարական մարմիններին կոչ է անում խնայողաբար ծախսել բյուջեի միջոցները եւ դրանք օգտագործել միայն տնտեսության զարգացմանը եւ քաղաքացիների բարեկեցությանը նպաստող ձեռնարկումների համար: Փաստաթուղթն արգելում է նորոգման աշխատանքների կամ քաղաքաշինական ծրագրերի իրականացման պատրվակով կառուցել վարչական հարկաբաժիններ, գնել, վերականգնել կամ ընդլայնել դրանք:**

**Հարկաբաժինների նորոգումը թույլատրվում է լոկ այն դեպքում, եթե ավարտվում է դրանց շահագործման արտոնված ժամկետը: Ընդունին նորոգման աշխատանքների ծրագիրը եւ դրանց բյուջեն պետք է հաստատվեն վերահսկիչ մարմիններում: Բացի դրանից, իշխանական կառույցներին արգելվում է հովանավորչական աջակցություն կամ նվիրատվություններ ստանալ նոր շենքերի կառուցման համար: Միաժամանակ մի քանի պաշտոն զբաղեցնող չինովնիկները չպետք է մեկից ավելի աշխատասենյակներ ունենան:**

**Ղեկավար հրահանգում նշվում է, որ իշխանությունների այդ քայլը պայմանավորված է նրանով, որ բնակչության նշանակալի մասը դժգոհ է կառավարության հակակոռուպցիոն միջոցառումների անբավարար արդյունավետությունից:**

**Կաշառակերության դեմ մղվող պայքարում սա ՉԺՀ իշխանությունների առաջին արմատական քայլը չէ: Մասնավորապես 2012-ի աշնանը իշխանությունները պաշտոնյաներին արգելեցին ընդունել թանկարժեք նվերներ, ինչպես նաեւ խոշոր գումարներ ծախսել ճաշկերույթների եւ պաշտոնական միջոցառումների կազմակերպման վրա: Համանման միջոցներ ձեռնարկվեցին նաեւ ՉԺՀ զինված ուժերի բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ:**

# ԱՄՆ դեսպանի սպանության մեղսակցի անձնագիրը՝ «Մուսուլման եղբայրների» առաջնորդի տանը




**Արաբական մի շարք երկրներում ամերիկյան ներկայացուցչությունների վրա հարձակումներ կատարվեցին այն բանից հետո, երբ համացանցում հայտնվեցին ԱՄՆ-ում նկարահանված «Մուսուլմանների անմեղությունը» կինոֆիլմի հատվածներ: Իսլամի հետեւորդները դրանք համարեցին իրենց համար վիրավորական:**

**«Մուսուլման եղբայրներ» շարժման «գործ կարդինալ» Հեյրաթ աշ Շաթերը եգիպտացի իսլամիստների երկրորդ դեմքն է գերագույն առաջնորդ Մուհամմեդ Բադիայից հետո, իսկայական ազդեցություն ունի «եղբայրների» միջավայրում, բայց ժողովուրդը չի սիրում նրան, նշում է վերահիշյալ եգիպտական կայքը:**

**Նախագահ Հոսնի Մուբարաքի տապալումից հետո կայացած առաջին նախագահական ընտրություններում Հեյրաթ աշ Շաթերը թեկնածու էր առաջադրվել, բայց մրցավազքից դուրս բերվեց «քրեական անցյալի» պատճառով. նա բանտից ազատվել էր «2011 թ. հեղափոխության» ալիքի վրա:**

**Նրանից հետո առաջաբեմի վրա հայտնվեց Մուհամմեդ Մուրսին, որին բանակը նախագահի պաշտոնից զրկեց այս տարվա հուլիսի 3-ի ուշ երեկոյան:**

**Եգիպտոսի գլխավոր դատախազությունը աշ-Շաթերի, ինչպես նաեւ «Մուսուլման եղբայրների» որոշ այլ առաջնորդների նկատմամբ քննություն է սկսել բողոքի ցույցերի մասնակիցների սպանությունների հրահրման մեղադրանքով:**

**Լիբիայում ԱՄՆ դեսպան Քրիստոֆեր Սթիվենսի սպանության մեղսակից մի ահաբեկչի անձնագիրը խուզարկության ժամանակ հայտնաբերվել է «Մուսուլման եղբայրների» առաջնորդներից մեկի՝ Հեյրաթ աշ Շաթերի տանը:**

**Եգիպտական «Ալ Բալադ» տեղեկատվական կայքէջը նշում է, որ իսլամիստական շարժման ակտիվիստ այդ կասկածյալի անունը առկա է տարածաշրջանի երկրներին փոխանցված ԿՀՎ ցուցակում:**

**ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը հիշեցնում է, որ դեսպան Քրիստոֆեր Սթիվենսը, ինչպես նաեւ դիվանագիտական աշխատանք կատարող երեք այլ անձինք Լիբիայի Բենղազի քաղաքում սպանվեցին 2012 թ. սեպտեմբերի 11-ին ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչության վրա կատարված հարձակման ժամանակ:**

# Աֆղանստանում ԿՀՎ ռազմակայանների թիվը կրճատվում է



ԿՀՎ-ն սկսել է Աֆղանստանում ռազմակայաններ փակել երկրից ամերիկյան զորաբաժնի հիմնական մասի առաջիկա դուրսբերման կապակցությամբ: Այդ մասին հաղորդում է «Վաշինգտոն փոստ» թերթը, վկայակոչելով ԱՄՆ իշխանությունների ներկայացուցիչներին: Մինչեւ 2014-ի վերջը ԿՀՎ 10 ռազմակայաններից կմնա 6-ը:

Կպահպանվի մասնավորապես Քաբուլի ռազմակայանը, որն աշխարհում ԿՀՎ խոշորագույն համալիրներից մեկն է: Աշխատանքը կշարունակեն նաեւ Բագրամի, Ղանդահարի, Մազարի-Շարիֆի, Ջալալաբադի եւ Հերաթի խոշոր ռազմակայանները: Բացի դրանից, ԿՀՎ-ն կօգտվի Աֆղանստանում տեղաբաշխված անօդաչու ինքնաթիռներից, որոնք պարեկություն կանեն Պակիստանի հյուսիս-արեւմուտքում:

Ամերիկյան հետախուզության եւ նախագահական վարչակազմի բարձրաստիճան աշխատակիցների խոսքերով, ներկայումս ԿՀՎ գործունեության առավել կարեւոր ուղղություն է համարվում Մերձավոր Արեւելքը (մասնավորապես Սիրիան եւ Եմենը), ինչպես նաեւ Հյուսիսային Աֆրիկան, որտեղ աշխուժացել են «Ալ Ղաիդայի» կողմնակիցները:

Անցած տարիներին Աֆղանստանում աշխատում էին ԿՀՎ հազարից ավելի սպաներ, վերլուծաբաններ եւ այլ մասնագետներ, բայց ներկայումս նրանց թիվը էապես կրճատվել է: Հատուկ ծառայության աշխատակիցներն օժանդակում էին ռազմական գործողություններին եւ որոնում «Ալ Ղաիդայի» առաջնորդներին: Մասնավորապես նրանց օգնությամբ ԱՄՆ-ը հայտնաբերեց Ուսամա բեն Լադենին, որը սպանվեց Պակիստանում 2011 թ. մայիսի սկզբին:

Նախագահ Բարաք Օբաման մտադիր է Աֆղանստանից ամերիկյան զորքերի մեծ մասը դուրս բերել մինչեւ 2014-ի վերջը: Դուրսբերման ստույգ ժամկետները, ինչպես նաեւ մնացող զինծառայողների կազմն ու դերը առայժմ անհայտ են:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՄԵՐԳԻ ՆԱԽՕՐԵԻՆ

# Հասմիկ Պապյան. «ՀՊՖՆ-ի նման նվագախումբ ունենալը մեծ հարստություն է մեզ համար»

Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի ներկա համերգաշրջանը կեզրափակվի այսօր, հուլիսի 25-ին, Հասմիկ Պապյանի մասնակցությամբ կայանալիք համերգով: Արամ Խաչատրյան համերգասրահում կայանալիք համերգը նվիրված է կոմպոզիտորներ Ռիխարդ Վագների եւ Ջուզեպպե Վերդիի 200-ամյա հոբելյաններին: Համաշխարհային հռչակ վայելող սոպրանո Հասմիկ Պապյանը կկատարի արիաներ Ռ. Վագների եւ Ջ. Վերդիի հայտնի օպերաներից, իսկ համերգը կղեկավարի դիրիժոր, ՀՊՖՆ գեղարվեստական ղեկավար Էդուարդ Թոփչյանը:

Ինչպես նշում է երգչուհին, ֆիլհարմոնիկի հետ 22 տարի առաջ է երգել ու իր համար վերադարձը շատ կարեւոր եւ հուզիչ է. «Իհարկե կան աշխարհում նվագախմբեր, որոնք ունեն 100-ամյակների ավանդույթներ, եւ նրանց սոցիալական պայմանները ուրիշ են, սակայն ՀՊՖՆ-ի նման նվագախումբ ունենալը իսկական հարստություն է մեզ համար: Իրենց հետ ես ինձ ազատ եւ հանգիստ եմ զգում»:



Երգչուհու հայաստանյան այցի նպատակը ի սկզբանե այլ է եղել, նա իրականում եկել էր ամառն ընտանիքի հետ անցկացնելու համար, սակայն երբ առաջարկ ստացավ ՀՊՖՆ-ից՝ չկարողացավ մերժել:

Անդրադառնալով համերգի նախապատրաստման դժվարությանը, Հասմիկ Պապյանն ասաց, որ կարճ ժամանակ ունեին այն իրականացնելու համար. «Մեկ շաբաթում կատարեցինք աշխատանք, որը ամիսների ջանք է պահանջում: Չնայած շոգին, փորձեցինք երկար, շատ լուրջ, քրտնաջան աշխատել, եւ հույս ունենք, որ լավ համերգ կունենանք»:

Նշենք, որ Հասմիկ Պապյանը որպես ջութակահար, ապա մեներգչուհի ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Նրա բեմելը կայացել է Երեւանի օպերային թատրոնում Ռոզինայի եւ Միմիի դերերգերով: 25 տարի շարունակ Հասմիկ Պապյանը եռանդուն եւ բեղուն գործունեություն է ծավալել համաշխարհային օպերային եւ համերգային բեմերում (Metropolitan Opera, Vienna State Opera, Bavarian State Opera, Deutsche Oper Berlin, Paris National Opera, La Bastille, La Scala եւ այլ հռչակավոր բեմահարթակներում): Նրա հայտնի դերերգերից են, Աիդա, Նորմա (կատարել է ավելի քան 150 անգամ աշխարհի տարբեր բեմերում), Լեդի Մակբեթ, Լեոնորա («Ճակատագրի ուժը»), Տոսկա, Դոննա Աննա, Աբիգայլ («Նաբուկո»), Միմի, Պամինա, Մաթիլդա («Վիլհելմ Տել»), Էլիզաբեթ («Դոն Կարլոս»), Դեզդեմոնա, Միքայելա, Սալոմե եւ այլ առաջատար դերերգեր: Իսկ Սան Ֆրանցիսկոյի օպերային թատրոնում նա կատարել է Օլիմպիայի դերերգը «Արշակ Երկրորդի» հեղինակային տարբերակի համաշխարհային պրեմիերայի ժամանակ (հայերեն թարգմանությամբ), ինչպես եւ մասնակցել է «Անուշ» օպերայի բեմադրությանը Միչիգանի օպերային թատրոնում: Հասմիկ Պապյանը համագործակցել է Ռիկարդո Մուտիի, Նելո Սանտիի, Մարչելո Վիոտիի, Պլասիդո Դոմինգոյի, Ջորջ Պրետրեի, Միշել Պլասոնի, Լեոնարդ Սլատկինի, Ջեյմս Քոնլոնի, Ջեյմս Լեվայնի, Գենադի Ռոժդեստվենսկու, Վալերի Գերգիեւի եւ այլ մեծահռչակ դիրիժորների, նշանավոր մեներգիչներ Նիկոլայ Գյաուրովի, Ռենե Պապեի, Թոմաս Հեմփսոնի, Ռենատո Բրուզոնի, Ռոբերտո Ալանյայի, Ջակոմո Արագալի, Խոսե Կուրայի, Ջուզեպե Ջակոմինիի, Պլասիդո Դոմինգոյի հետ: Հասմիկ Պապյանը դասվում է ժամանակակից լավագույն սոպրանոների շարքին: Երգչուհու երգացանկում կենտրոնական դեր են զբաղեցնում Վերդիի օպերաները (13 դերերգ), իսկ վագներյան օպերաներից Սենտայի եւ Իզոլդայի դերակատարումները իրավամբ համարվեցին նրա դերասանական կարիերայի գագաթնակետերից:

Հայաստանյան համերգից հետո երգչուհին շարունակելու է իր գործունեությունն աշխարհի տարբեր բեմերում, մեկ եւ կես տարի է նա աշխարհի հեղինակավոր բեմերում ներկայացնում է «Տրիստան եւ Իզոլդա» օպերան:

Հատկանշական է, որ ֆիլհարմոնիկի այս համերգաշրջանը լի էր հիշարժան համերգներով. բացումը ազդարարեց Երեւանյան 6-րդ միջազգային երաժշտական փառատոնը, ապա ելույթներ ունեցան շեփորահար Սերգեյ Նակարյակովը, թավջութակահար Մարիո Բրունելլոն, կլարնետահար Մասսիմո Մերչելին, դաշնակահար Բերնդ Գլեմզերը եւ շատ ուրիշներ: Կայացան մի քանի բարեգործական համերգներ, Պուչինիի «Տուրանդոտ» եւ Մասկանիի «Գեղջկական պատիվ» օպերաների համերգային կատարումները, ինչպես նաեւ մի շարք հոբելյանական համերգներ՝ նվիրված Անկախության 21-ամյակին, Գերմանիայի եւ Բրազիլիայի հետ դիվանագիտական հարաբերությունների 20-ամյակին, Նոտր-Դամի հիմնադրման 850-ամյակին, ջութակահար Ռուբեն Ահարոնյանի 65-ամյակին, կոմպոզիտոր Միշել Լեգրանի 80-ամյակին, կոմպոզիտոր Մելիք Մավիսակալյանի 75-ամյակին եւ այլն: Իսկ հատուկ համերգներով հիշատակվեցին Սպիտակի երկրաշարժի, Հայոց մեծ եղեռնի օրերը, ինչպես նաեւ կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի վառ հիշատակը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Տաթեւ Մնացականյանի լուսանկարչական երկխոսության հայ-լեհական արտահայտությունները



Զբոնշը Լեհաստանի հյուսիսում գտնվող փոքր քաղաք է, մոտ 10.000 բնակչությամբ: Այս քաղաքի բնակիչները այնքան են սիրում իրենց բնակավայրը, որ վերածել են այն հեքիաթային վայրի. այստեղ մարդկային կյանքը այնպես սերտ է ձուլված բնությանը, որի ներդաշնակությունից ծնվում են քաղաքային միջավայրի բոլոր գեղեցիկ զգացողությունները՝ սկսած կարմիր կղմինդրածածկ տանիքներով տներից, ամենուրեք աչք շոյող խնամված բուսածածկույթից, մինչեւ իսկ հացաբուլկեղենի փոքրիկ խանութներն ու եղեւնիների տակ առավոտյան թափված կոներն ու չորացած տերեւները: Բայց ամենից տպավորիչը՝ քաղաքի մշակութային կյանքն է, ամենօրյա եւ շարունակական, որի մեջ ապրում է Զբոնշի յուրաքանչյուր բնակիչ:

Այս նկարագրությունը ինձ փոխանցվեց զրուցակցիցս՝ արվեստագետ-լուսանկարիչ Տաթեւ Մնացականյանից, որը վերջերս մասնակցել է Զբոնշում տեղի ունեցած ժամանակակից փորձարարական արվեստի միջազգային փառատոնին՝ ներկայացնելով ընթերցողներին արդեն հայտնի «Մշակութային երկխոսություն» լուսանկարչական իր ծրագիրը: Տաթեւ Մնացականյանը իր ժամանակի մեջ յուրատեսակ որոնող է, որը փորձում է գտնել ավելի անհայտ մնացած, մոռացության մատնված ավագ սերնդի արվեստագետներին, ընդ որում ոչ միայն՝ հայ: Ծրագիրը ընդլայնելու միտումը նրան մղեց ավելի խորը որոնումների եւ նոր հարաբերությունների սկիզբ դրվեց. առաջին «երկխոսողներին» գտավ Եգիպտոսում եւ Հայաստանում այդ երկրի դեսպանատան միջոցով կարողացավ իրագործել այն, որի ցուցադրությունը կայացավ ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակում, ամիսներ առաջ: Լեհական փառատոնին նա մասնակցեց լուսանկարների վերոհիշյալ շարքով, միաժամանակ նրան հաջողվեց ինչպես Զբոնշում, նաեւ Վարշավայում եւ այլ քաղաքներում գտնել ու հանդիպել ավագ սերնդի լեհ արվեստագետների եւ այդ մի քանի օրերի ընթացքում իրականացրեց նաեւ, այսպես ասենք, լեհական երկխոսությունը:

Տաթեւին հնարավորություն տրվեց իր արվեստը ներկայացնել ցուցադրության երեք եղանակով. առաջինը՝ փողոցային արվեստ (street art) կոչված ձեւաչափով: Մեծադիր լուսանկարները փակցվեցին քաղաքի շենքերի պատերին՝ որոշակի իմաստային համապատասխանությամբ եւ նշանակությամբ: «Այս քաղաքում մարդիկ ապրում են ներդաշնակ կյանքով, ասես դրախտում լինեն: Ես չուզեցի փակ տարածք մտնել, փորձեցի լուսանկարները հանել դուրս, ինձ ընդառաջեցին սիրով: Նկարները դեռ այնտեղ են, ժամանակի մեջ երբ խունանան, կիհանեն արդեն: Ես վերադարձա, բայց իմ հետքը մնում է դեռ այդ պատերին»:

Արվեստի գործերի ցուցադրման այս ձեւը անմիջական, հընթացս շփման հնարավորություն է տալիս, եւ արվեստը փաստորեն դառնում է ամենօրյա ապրվող կյանքի մասնիկ:

Ցուցադրության երկրորդ եղանակը քաղաքի եկեղեցու ճերմակ պատերին լուսանկարների պրոյեկցիան էր՝ գիշերային ժամին: Ավելի գրավիչ դարձնելու համար գերմանացի սաքսոֆոնահարը ջանք չխնայեց, գիշերային լռությունը պարբերաբար ճեղքելով սաքսոֆոնի ազդեցիկ հնչյուններով: Հաջորդը կայացավ քաղաքի մշակույթի կենտրոնում, դահլիճում: Թանձր մթության մեջ ցուցադրվող սեւ-սպիտակ լուսանկարների ցուցադրության տպավորությունն ավելի ազդեցիկ



Լեհ նկարիչ, քանդակագործ Զ. Մալեշեւսկին

դարձրին Վիվալդիի «Տարվա եղանակների»՝ մարդկային հոգու ամենանուրբ զգացումները շոշափող, կյանքի ընթացքի փոփոխություններն արտահայտող՝ մերթ թախծող, մերթ ցնծացող մեղեդու հնչյունները, որի տպավորությունը, ինչպես պատմում էր հեղինակը, արտակարգ է եղել, կոմպոզիցիան ընդունվել է մեծ ջերմությամբ:

Լեհական այս փոքրիկ քաղաքն ու իր տասնօրյա փառատոնային մթնոլորտը Տաթեւ Մնացականյանի հոգեկան աշխարհի մի մասնիկը դառնալով՝ հարստացրել է մտածողության թարմ երանգներով: Մեր այս զրույցից ինձ համար պարզ դարձավ վերջապես այս ծրագրի ինքնին մարդասիրական բնույթի բուն նպատակը (զուտ մասնագիտական հետաքրքրությունից բացի), որով եւ պատկերացում կարելի է կազմել երիտասարդ արվեստագետի ներքին առանձնահատկության եւ ձեռագրի անհատականության մասին:

Ահա թե ինչպես է մտածում նա. «Միայն ծրագիրն իրականացնելու համար չէ, որ հանդիպում եմ այս մարդկանց: Ես շփվում եմ կյանքի մեծ ճանապարհ անցած ու փորձ ունեցող մարդկանց հետ, եւ այդ զրույցների մեջ ուսանելի շատ բան եմ գտնում: Լեհ արտիստներից մեկը ինձ ցույց տվեց կյանքի թաքնված խորհուրդներն արտացոլող իր պատկերացումների շատ հետաքրքրական մոդելը, ժամանակի՝ յուրաքանչյուրի համար պահված գաղտնիքի հմայքը. երբ ապրում ես դու քո այսօրը, քո ներկան, ու չգիտես վաղը ինչ է լինելու: Սակայն կյանքն իր պատասխանն ունի, որովհետեւ արդեն պատրաստ ունի հանդիպման կամ բաժանման քեզ սպասվող անակնկալը»:

Մարդու անհատական աշխարհը թափանցելու, ճանաչելու անհրաժեշտությունն օգնում է, անշուշտ, լուսանկարչության իր արվեստի հաջողությանը, սակայն միաժամանակ նրա մեջ խոսում է կարեկից մարդու զգացումը, ժամանակը միայնակ ծեր արտիստի հետ կիսելու պատրաստակամությունը: Ֆոտոապարատը շարժելուց առաջ նա երկար, շատ երկար լսում է այդ երկրորդ անձի մենախոսություն-խոսքը, նրա համար անհրաժեշտ թեթեւություն բերող՝ գուցե եւ վերջին խոստովանությո՞ւնը, հետեւում ձայնի հնչերանգին, հոգեկան ապրումներին: Քչերն են կարող այդպես արձանագրել լուսանկարչական փաստը: «Հասկացա որքան բնական քայլ եմ փորձում անել, եւ համարում եմ դա մնայուն գործ: Ինձ հետաքրքիր չէ լինել այսպես ասած ժամանակակից արվեստի բուն կենտրոնում, հայտնվել այս կամ այն շրջանակում, հերթապահ ինչ-որ բան ասել կամ անել: Սա իմ ներքին խնդիրն է արվեստին ուղղված, իմ հարցը, որ անհանգստացնում է ինձ, եւ ես փորձում եմ գտնել դրա պատասխանը, գտնել այդ մարդկանց, տալ այդ արվեստագետներին՝ ի հայտ բերելով, նրանց մեջ արթնացնելով սեփական ինքնագնահատանքի գիտակցությունը, այո, նաեւ՝ միջազգայնացնել:

Լեհաստանը տվեց այդ փորձը. շվեդ, գերմանացի, թե լեհ, տարբերություն չկար: Երբ հասկանում էին միտքդ, արածիդ իմաստը, ասում էին. «Դու ո՞նց ես որոշել այդպիսի բան անել: Դու կարո՞ղ ես դա անել»:

Այդպիսին է իմ բնույթը՝ անել կարեւոր բան, կամ՝ չանել, ծանոթանալ մարդուն՝ արժեքը գնահատելով եւ փորձել հասկանալ նրան: Պատահում է զրուցում եմ հետները, մեկ էլ աչքերը լցվում են: Այդ պահին զսպում եմ ինձ, որ ֆոտո չանեմ, որպեսզի զգամ ինչ է կատարվում նրա հետ: Արցունքները մեկ էլ հետ են քաշվում, ինչ-որ բան է հիշում, մի բան է պատմում իր կյանքից. իր հետ ինչպե՞ս են վարվել, ի՞նչ է կատարվել: Այս ամենը տեսնում եմ, զգում, հետո նոր ուզում եմ ֆոտոյով ցույց տալ: Նրան չեն ճանաչում: Քչերը գիտեն իր գոյության մասին, բայց նա գործել է, ստեղծել է, հետք է թողել: Վաղը կմահանա իր արվեստանոցում, այդպես չիմացված...»:

Սա խիստ անհատական զգացողություն է, ապրում է, վերաբերմունք է, որ կրում է իր մտածողության մեջ Տաթեւ Մնացականյանը: Այս նուրբ զգայնությունները արտահայտելու համար նա «օգտագործում է» արվեստագետի իր թափանցող աչքը եւ իհարկե՝ ֆոտոօբյեկտիվը: Եվ հրաշալի հաջողվում է զգացմունքը համադրել կատարողական պրոֆեսիոնալիզմի հետ:

ՍԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Գեւորգ Ղազարյանը «Շախտյորում» նորամուտը նշեց չեմպիոնների լիգայում



Հայաստանի հավաքականի հարձակվող Գեւորգ Ղազարյանը Կարագանդայի «Շախտյորի» կազմում նորամուտը նշեց չեմպիոնների լիգայում: Նա Բելառուսի ԲԱՏԷ-ի հետ Կարագանդայում կայացած պատասխան խաղում թիմի մեկնարկային կազմում էր: 70-րդ րոպեին Ղազարյանն իր տեղը զիջեց Իգոր Զենկովիչին, որն էլ խաղավարտից 8 րոպե առաջ խփեց հանդիպման միակ գոլը: Հիշեցնենք, որ առաջին խաղում էլ «Շախտյորը» հյուրընկալվելիս հաղթել էր 1-0 հաշվով: Թեեւ Զավեն Բադոյանը ԲԱՏԷ-ի հետ ժամանել էր Կարագանդա, սակայն նույնիսկ հայտացուցակում նրան չընդգրկեցին: Չեմպիոնների լիգայի որակավորման 3-րդ փուլում «Շախտյորը» կմրցի Ալբանիայի «Սկենդերբեուի» հետ, որը պայքարից դուրս էր մղել Բաքվի «Նեֆթչիին»:

«Շախտյորի» գլխավոր մարզիչ Վիկտոր Կումիկովը խաղից հետո դրվատանքով է խոսել Գեւորգ Ղազարյանի մասին. «Ղազարյանը Հայաստանի ազգային հավաքականի հիմնական կազմի ֆուտբոլիստ է, ինչն արդեն խոսում է նրա բարձր կարգի մասին: Մենք պայմանավորվել էինք, որ նա կմասնակցի առաջին խաղակեսին եւ 2-րդ կեսի մի մասին: Այդ ֆուտբոլիստը շատ արագ է մարզավիճակ ձեռք բերում: Կարծում եմ, որ նա ամբողջությամբ կմասնակցի հաջորդ հանդիպմանը»:

Ահա չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլում կայացած մյուս հանդիպումների արդյունքները (փակագծում նշված է առաջին խաղի հաշիվը). «Դաուգավա»-«Էլֆսբորգ»` 0-4 (1-7), «Նիմե Կալյու»-ՀԻԿ` 2-1 (0-0), «Սուտյեսկա»-«Շերիֆ»` 0-5 (1-1), «Մոլդե»-«Սլայգո Ռովերս»` 2-0 (1-0), «Ստրեմսգոդսեթ»-«Մինսկի Դինամո»` 1-3 (1-6), «Մաքաբի» Թ-Ա-«Դյոր»` 2-1 (2-0), «Վարդար»-«Ստյաուա»` 1-2 (0-3), «Սելթիկ»-«Կլիֆտոնվիլ»` 2-0 (3-0), «Դինամո» Զ.-«Ֆոլա»` 1-0 (5-0), «Ժելեզնիչար»-«Վիկտորիա»` 1-2 (3-4), «Հավնարֆյորդյուր»-«Էկրանաս»` 2-1 (1-0):

# 10 համարի մարզաշապիկն ընդմիշտ ամրագրվել է Պավել Բուրեին

ԱՄՆ-ի հոկեյի ազգային լիգայի «Վանկուվեր Քենակս» թիմը 10 համարի մարզաշապիկը հավերժ ամրագրել է ժամանակին այդ ակումբում հանդես եկած ռուս հանրահայտ հոկեյիստ Պավել Բուրեին: Այդ համարի մարզաշապիկով «Հրթիռ» մականունը կրող հոկեյիստը թիմի կազմում հաջողությամբ խաղացել է 1991-1998-ին: Այսուհետ նրա մարզաշապիկը կհայտնվի «Ռոջերս Արենա» մարզադահլիճում, իսկ թիմում այլեւս ոչ ոք այդ համարը չի կրի: Նշենք, որ անցյալ տարի Պավել Բուրեի անունը գրանցվել էր հոկեյի ազգային լիգայի Փառքի սրահում: Հենց այն ժամանակ էլ «Վանկուվեր Քենակսի» սեփականատեր Ֆրանչեսկո Ակվիլինին առաջարկել էր 10 համարի մարզաշապիկն ընդմիշտ ամրագրել Բուրեին:

«Այդ իրադարձությունն իմ կյանքի կարեւորագույն պահերից մեկը կդառնա: Դա մեծ պատիվ է ինձ համար: Հոկեյիստի կարիերան սկսելիս այդ մասին նույնիսկ երազել չէի կարող: Նույնիսկ երբ խաղում էի «Վանկուվեր Քենակսում» եւ մասնակցել եմ Սթեն Սմիլի մեծարման միջոցառմանը, այն ժամանակ էլ չէի մտածում, որ երբեւէ ես էլ կարժանանամ նման պատվի: Ես մշտապես հիանալի հարաբերություններ եմ ունեցել ակումբի երկրպագուների հետ: Գրեթե յուրաքանչյուր խաղից հետո ժամերով ինքնագրեր էի բաժանում նրանց: Երկրպագուները հոկեյում ամենակարեւոր մարդիկ են, հանուն որոնց մենք խաղում ենք», նշել է Պավել Բուրեն:

Թիմի կազմում անցկացրած առաջին մրցաշրջանում Բուրեն ճանաչվեց հոկեյի ազգային լիգայի լավագույն նորեկ: Իսկ 1993/94-ի մրցաշրջանում նա դարձավ առաջնության լավագույն ռմբարկու եւ թիմի հետ մտավ Սթենլիի գավաթի եզրափակիչ: Ընդհանուր առմամբ նա «Վանկուվեր Քենակսում» 428 խաղ է անցկացրել` խփելով 254 գոլ: Այդ ցուցանիշը մինչ օրս ռեկորդային է թիմի հոկեյիստների համար:

«Վանկուվերից» Բուրեն տեղափոխվեց «Ֆլորիդա», որի կազմում 2 տարի անընդմեջ արժանացավ լավագույն ռմբարկուի համար սահմանված Մորիս Ռիշարի անվան մրցանակին: Հետագայում ծնկի վնասվածքի պատճառով Պավել Բուրեն ստիպված էր 34 տարեկանում ավարտել ելույթները: Ընդհանուր առմամբ նա հոկեյի ազգային լիգայում անցկացրեց 702 խաղ, խփեց 437 տափօղակ, վաստակեց 779 միավոր:

Բացի այդ, Բուրեն 6 անգամ մասնակցել է հոկեյի ազգային լիգայի բոլոր «աստղերի» հանդիպումներին, իսկ 2000-ին ճանաչվել է ամենաարժեքավոր խաղացող: Նշենք, որ «Վանկուվեր Քենակսում» մինչեւ Բուրեն 3 հոկեյիստների` Սթեն Սմիլին (12 համարը), Տրեւոր Լինդենին (16) եւ Մարկուս Նեսլունդին (19) ամրագրվել էին իրենց համարի մարզաշապիկները:

# Իսինբաեւան շուտով հրաժեշտ կտա սպորտին



Օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոնուհի, հանրահայտ ձողացատկորդուհի Ելենա Իսինբաեւան հայտարարել է, որ աշխարհի առաջնությունից հետո հրաժեշտ է տալու սպորտին: Հիշեցնենք, որ թեթեւ աթլետիկայի աշխարհի հերթական առաջնությունը կայանալու է օգոստոսի 10-18-ին Մոսկվայում:

Օրերս Իսինբաեւան մասնակցեց թեթեւ աթլետիկայի Ռուսաստանի առաջնությանը եւ 4,75 մետր արդյունքով դարձավ հաղթող: Արդեն չեմպիոնուհու կարգավիճակով նա փորձեց հաղթահարել 4,85 մետր բարձրությունը, սակայն դա նրան չհաջողվեց:

31-ամյա Իսինբաեւան հաղթող է ճանաչվել 2004-ին եւ 2008-ին կայացած ամառային օլիմպիական խաղերում, իսկ 2012-ին Լոնդոնում դարձել է օլիմպիադայի բրոնզե մեդալակիր: Իսինբաեւան աշխարհի 28 ռեկորդների հեղինակ է:

# Ամենաշատ աշխատավարձ վճարող ակումբը «Մանչեսթր Սիթին» է

Sportinq Intelligence-ն եւ ESPN Magazine-ն կազմել են աշխարհում ամենաշատ աշխատավարձ վճարող մարզական ակումբների ցանկը, որը գլխավորում է անգլիական «Մանչեսթր Սիթին»: Թիմի յուրաքանչյուր ֆուտբոլիստին ակումբը տարեկան միջինը վճարում է 5,2 մլն ֆունտ ստեռլինգ աշխատավարձ: 2-րդ տեղում բեյսբոլի «Լոս Անջելես Դոջերսն» է` 4,86 մլն: Լավագույն եռյակը եզրափակում է Մադրիդի «Ռեալը»: Արքայական ակումբում ֆուտբոլիստների միջին աշխատավարձը 4,718 մլն ֆունտ ստեռլինգ է:

Հաշվարկն իրականացվել է 10 մարզաձեւերի 278 ակումբների շրջանում: «Բարսելոնում» միջին տարեկան աշխատավարձը կազմում է 4,69 մլն, «Միլանում»` 4,251 մլն, «Լոս Անջելես Լեյքերսում»` 4,09 մլն: Այնուհետեւ գալիս են «Չելսին»` 4,058 մլն, «Բավարիան»` 4 մլն եւ «Ինտերը»` 4 մլն:



# Հայ շախմատիստուհիներից 3-ը հաղթանակով մեկնարկեցին

Բելգրադում մեկնարկել է շախմատի Եվրոպայի կանանց անհատական 14-րդ առաջնությունը, որին մասնակցում են 35 երկրների 168 շախմատիստուհիներ: Հայաստանը ներկայացնում են 4 շախմատիստուհիներ: Նրանցից 3-ը հաղթանակով մեկնարկեցին:

Լիլիթ Մկրտչյանը հաղթեց Սվետլանա Շուլակովային, Մարիա Կուրսովան պարտության մատնեց Տիջանա Բլագոեւիչին, իսկ Լիլիթ Գալոյանն առավելության հասավ Բարբարա Դիզդարեւիչի նկատմամբ: Մեկնարկն անհաջող էր միջազգային վարպետ Աննա Հայրապետյանի համար, որը զիջեց բուլղարուհի Անտոանետա Ստեֆանովային: Ռուսաստանը ներկայացնող Ալինա Բալայանն էր պարտվեց Կատերինա Լահնոյին:

# Գրիգորյանն ու Հայրապետյանը առաջատարների թվում են

Իսպանական Սիտգես քաղաքում մեկնարկած շախմատի մրցաշարում 4 հայ շախմատիստներից մրցաշարն առավել հաջող են սկսել Հովիկ Հայրապետյանն ու Կարեն Գրիգորյանը` շահելով 2 պարտիաներն էլ: Հովիկը պարտության է մատնել Էլիզաբեթ Ռուիզին եւ Ջոն Կանալին, Կարենը հաղթել է Խավիեր Ֆեռնանդեսին ու Էստեբան Մոնսիլային:

1,5 միավոր է վաստակել Կարեն Մովսիսյանը, որը Խոսեպ Ռաֆոլսին հաղթելուց հետո ոչ-ոքի է խաղացել Խավիեր Ավիլայի հետ: Նույնպիսի արդյունք ունի նաեւ Մարկ Բասենցյանը, որը հաշտություն է կնքել Ալեքսանդր Կովչանի հետ ու հաղթել է Թիմ Բինկրաուտին:

# Ղարամյանն առաջին հաղթանակը տոնեց

Բիլի շախմատի մրցաշարի 2-րդ տուրում Տիգրան Ղարամյանը սեւերով հաղթելով Վլադիմիր Մինկոյին, վաստակեց 1,5 միավոր: 3-րդ տուրում նա սպիտակներով կմրցի Հուանգ Քսիանի հետ: 2-ական միավորով աղյուսակը գլխավորում են 10 շախմատիստներ:

# «Կուբանը» կփորձի Օզբիլիսին պահել թիմում




Ռուսական լրատվամիջոցներում լուրեր են տարածվել, թե Արաս Օզբիլիսը շուտով «Կուբանից» տեղափոխվելու է Մոսկվայի «Սպարտակ»: Այս առնչությամբ «Կուբանի» տնօրենների խորհրդի անդամ Սուրեն Մկրտչյանը հանդես է եկել պարզաբանմամբ. «Մոսկվայի «Սպարտակ» Օզբիլիսի հնարավոր տեղափոխության մասին ինձ ոչինչ հայտնի չէ: Նման խոսակցությունների պատճառն այն է, որ Օզբիլիսն իրեն շատ վատ է դրսեւորում «Կուբանում»: Իրականությանը համապատասխանում է այն փաստը, որ նրանով իրոք հետաքրքրվում են մի շարք թիմեր: Սակայն «Կուբանի» ղեկավարությունը ցանկանում է, որպեսզի Օզբիլիսը մնա ակումբում: Ինձ հայտնի չէ «Կուբանից» Օզբիլիսի հեռանալու ցանկության մասին:

Եթե ֆուտբոլիստը մտածում է այլ ակումբ տեղափոխվելու մասին, նա իրեն այդքան լավ չի դրսեւորի: Մենք ոչ մեկին բռնի ուժով թիմում չենք պահի: Դա ճիշտ չի լինի: Մենք հույս ունենք, որ կկարողանանք թիմում պահել Օզբիլիսին, որից սպասելիքները մեծ են: Իհարկե, եթե շահավետ առաջարկ ստանա ակումբը, ֆուտբոլիստն էլ ցանկություն ունենա տեղափոխվելու, սխալ կլինի այն մերժելը: Սակայն այսօրվա դրությամբ Օզբիլիսը թիմի առանցքային ֆուտբոլիստներից մեկն է եւ մենք ցանկանում ենք, որ շարունակի ելույթներն ակումբում»:

# Ամենամեծ եկամուտը ստացել է «Յուվենտուսը»

Ամփոփվել են չեմպիոնների լիգայի նախորդ խաղարկության արդյունքները: Չեմպիոնների գավաթակիր Մյունխենի «Բավարիան» ընդհանուր առմամբ այդ մրցաշրջանի մասնակցությունից 55,046 մլն եվրո է վաստակել, իսկ եզրափակիչի մասնակից Դորտմունդի «Բորուսիայի» եկամուտը կազմել է 54, 161 մլն եվրո:

Առավել մեծ եկամուտ է ստացել Թուրինի «Յուվենտուսը», որը 1/4 եզրափակիչում զիջել էր «Բավարիային»: Ստացած 65,315 մլն եվրոյի մեծ մասը (44,815 մլն) կազմել են խաղերի հեռուստահեռարձակման վաճառքի գումարները: Մեծ եկամուտ են ստացել նաեւ «Միլանը»` 51,357 մլն եվրո, «Ռեալը»` 48,441 մլն, «Բարսելոնը»` 45,508 եւ ՊՍԺ-ն` 44, 690 մլն:

Ընդհանուր առմամբ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 32 մասնակիցները 904,6 մլն եվրո են ստացել, որից 409,6 մլն-ը կազմել է հեռուստահեռարձակման վաճառքի գումարը:

# Մահացել է Ջալմա Սանթոսը

Բրազիլիայում 84 տարեկանում թոքերի բորբոքումից մահացել է ֆուտբոլի աշխարհի կրկնակի չեմպիոն Ջալմա Սանթոսը: Նա 1958-ին եւ 1962-ին Բրազիլիայի հավաքականի կազմում նվաճել է աշխարհի առաջնության ոսկե մեդալները: Սանթոսին ժամանակին համարում էին ֆուտբոլի պատմության մեջ լավագույն աջ պաշտպան: Նա աչքի էր ընկնում իր տեխնիկայով եւ գրոհներին միանալու ունակությամբ: Ջալմա Սանթոսը ֆուտբոլային կարիերան ավարտել է 41 տարեկանում բրազիլական «Ատլետիկո Պարանենսե» թիմում:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

## Օրվա հեռքերով

# Տարածաշրջանում օրակարգային է դառնում միացյալ «Քուրդիստանի հարցը»

### Դա սպառնալիք է քուրդ բնակչություն ունեցող երկրների, հատկապես Թուրքիայի միասնականության համար

«**Ազգ**»-ի երեկվա համարում «Հյուսիսային Սիրիան անցել է քրդերի վերահսկողության տակ» վերնագրով հոդվածում նշել էինք, որ «Քրդական ժողովրդավարական միասնություն» կուսակցությունը՝ PYD-ն, մաքրելով տարածքը, «Ան Նուսրայի» վարձկաններից, պատրաստվում է ինքնավարության, եւ դա համարել էինք Թուրքիայի սիրիական քաղաքականության ձախողումը:

PYD-ի գլխավորությամբ Հյուսիսային Սիրիայի շուրջ 2 միլիոնի հասնող քրդերի ինքնավարություն հռչակելու պատրաստակամության մասին տեղեկացվել էր թուրքական մամուլում: Քրդական այս պատրաստակամությանը հուլիսի 23-ին արձագանքել էր նաեւ ԱՄՆ պետքարտուղարությունը, ի դեմս խոսնակ Ջեն Պսակիի, վերագրելով դա քրդերի անկախության ձգտումներին: Դրանց առնչությամբ խոսնակը հայտարարել էր. «Մտահոգությամբ ենք հետեւում Սիրիայում անկախ քրդական շրջան հռչակելու վերաբերյալ մամուլում տարածվող լուրերին: Դա կսրի արաբների ու քրդերի միջեւ առկա լարվածությունը եւ առիթից օգտվելու հնարավորություն կտա ծայրահեղականներին»:

ԱՄՆ պետքարտուղարության խոսնակը միաժամանակ նշել է, որ իրենք ուշադիր հետեւում են «Իրաք-Սիրիայի իսլամական պետություն» խմբավորման եւ Սիրիայի քրդերի բախումներին: Այս խմբավորումը սկզբում կրում էր «Իրաքի իսլամական պետություն» անվանումը, որը ենթակա էր «Ալ Ղաիդային»: Խմբավորման իրաքյան թեւին, այնուհետեւ միացել է «Ան Նուսրայի» գլխավորած սիրիական թեւը, եւ խմբավորումը ստացել է «Իրաք-Սիրիայի իսլամական պետություն» անունը:

Անկախ անվանումից, ենթադրվող այս պետության սահմանները Իրաքով ու Սիրիայով չեն սահմանափակվում են, այլ ձգվում են Թուրքիայից Արաբական ծով, այսինքն՝ դրանք ներառում են նաեւ Սաուդյան Արաբիան ու Պարսից ծոցի երկրները: Կհաջողվի՞ «Ալ Ղաիդային» ու «Ան Նուսրային» ձեւավորել սուննի արաբների միացյալ պետություն անծայրածիր այս տարածքում, հազիվ թե: Բայց որ ստեղծման նախաձեռնությունը հնարավորություն կտա շահագրգիռ միջազգային ուժերին ձեւափոխելու Մերձավոր Արեւելքի քաղաքական քարտեզը, ակնհայտ է:

Համենայն դեպս, նախորդ օրը «Ազատ Սիրիայի բանակի» հրամանատարներից Բաշար Էլ Զոաբին հայտարարել է, որ մինչեւ ամսվա վերջը անկախություն են հռչակելու Սիրիայի հարավային շրջանները: Եթե այս հայտարարությունը համադրենք հյուսիսային Սիրիայում քրդական ինքնավարություն կամ անկախություն հռչակելու PYD-ի պատրաստակամության հետ, ապա պարզ կդառնա տարածաշրջանում ընթացող քաղաքական զարգացումների պատկերը:

Մանավանդ որ Իրաքը ներքաշվել է շիա-սուննի միջդավանանքային հակամարտության մեջ, երկրի հյուսիսում ձեւավորված «Քուրդիստան» շրջանը դե-ֆակտո անկախացել է, դրա օրինակով ու անմիջական հարեւանությամբ այդպիսի մի շրջան ստեղծվում է նաեւ հյուսիսային Սիրիայում, դեռ ավելին՝ «Քուրդիստան» շրջանի նախագահ Մասուդ Բարզանի քրդերի անկախության մասին արտահայտվելիս, ինչպես արտահայտվել էր հուլիսի 22-ին Էրբիլում գումարված համազգային քրդական համագումարի նախապատրաստական նիստում, քրդերից պահանջել է համախմբում ու միասնություն, իսկ քուրդ բնակչություն ունեցող Իրանին, Իրաքին, Սիրիային ու Թուրքիային սպառնացել, թե այլեւս ոչ ոք չի կարող զենքի ուժով ճնշել քրդերի ազատագրական պայքարը:

Այլ կերպ՝ տարածաշրջանի խնդիրը «Ալ Ղաիդայի» ու «Ան Նուսրայի» արաբական միացյալ պետությունը չէ, այլ քրդական անկախ պետականության ստեղծման համար արեւելյան, արեւմտյան, հարավային եւ հյուսիսային «Քուրդիստանի» միավորումը ըստ երեւույթին PKK-ի առաջնորդության: Ինչո՞ւ, որովհետեւ ավելի քան 30 տարի Թուրքիայում զինված պայքար մղող այս կազմակերպությունը հենակետեր ունի Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանում, նաեւ ռազմական կառույցներ Սիրիայում ու Իրանում:

Այսինքն, PKK-ն, բացի Թուրքիայից, քրդերին առաջնորդում է նաեւ Սիրիայում ու Իրանում՝ պայքարելով այս երկրներում պետական իշխանությունների դեմ: Այդ պայքարը, սակայն, ծառայում է միացյալ «Քուրդիստանի» նախադրյալների ստեղծմանը, այլ ոչ թե միասնական քրդական պետության կազմավորմանը այն առումով, որ հակամարտություններում ամենաանլուծելին ինքնիշխանության եւ հողային խնդիրներն են: Դրա վառ օրինակը դեռեւս 1948-ին սկզբնավորված արաբա-իսրայելական հակամարտությունն էր:

Սակայն անկախ անլուծելիության հանգամանքից, միացյալ «Քուրդիստանի» կազմավորման նախադրյալների ստեղծումն անգամ սպառնալիքի տակ է դնում ինչպես Իրաքի ու Սիրիայի, այնպես էլ Իրանի եւ Թուրքիայի միասնականությունն ու տարածքային ամբողջականությունը: Ընդ որում, քուրդ բնակչություն ունեցող այս երկրներից որեւէ մեկում տեղի ունեցող ամեն մի զարգացում փոխներգործություն է ունենում մյուսի վրա: Թերեւս այդ առումով պատահական չէր հյուսիսային Սիրիայում ընթացող զարգացումներին արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի բուռն արձագանքը. «Թուրքիան չի հանդուրժի քրդական որեւէ նախաձեռնություն՝ դիմելով անհրաժեշտ բոլոր քայլերի»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Եվրոպական ալտրուիզմ



**Եվրոխորհրդարանն, ամենայն հավանականությամբ, Ադրբեջանի նախագահական ընտրություններին դիտորդներ չի ուղարկի: Պաշտոնական Բաքվի որոշ ներկայացուցիչներ շտապել էին դա ներկայացնել այնպես, իբր «Եվրոխորհրդարանն Ադրբեջանը հանել է մոնիտորինգի ենթակա երկրների ցուցակից՝ հաշվի առնելով ժողովրդավարության բնագավառում վերջին տարիների ակնառու առաջընթացը»:**

**Այս «բացատրությանն», իհարկե, նույնիսկ դրա հեղինակը չնչին հավատ չի ընծայում: Խնդրի շուրջը «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայությունը զրուցել է Եվրոխորհրդարանի պատգամավորներից մեկի հետ, ում անունը սույն տեղեկատվությունը տարածած haqqin.az-ը չի նշել: Ստացվել է չափազանց ուշագրավ պատասխան.**

**- Ադրբեջանի իշխանությունները տառացիորեն մի քանի օր առաջ Եվրոպա գազ արտահանելու որոշում են ընդունել, եւ ճիշտ չէր լինի մեր ներկայացուցիչներին Բաքու ուղարկել, որպեսզի ընտրությունների վերաբերյալ քննադատական դիտողություններ արտահայտեն,- ասել է Եվրոխորհրդարանի պատգամավորը (տես http://haqqin.az/news/7732):**

**Ստացվում է, որ եվրոպացիների համար ցանկացած ռեժիմ, որն իրենց գազ է մատակարարում, քննադատությունից դուրս է, թեեւ իրենք քաջ գիտեն, թե այդ ռեժիմն ինչպես է իշխանության եկել եւ ինչպես է շարունակում այն պահել: Իսկ ահա Վրաստանը, որ գազ չունի, Եվրոխորհրդարանի կողմից կենթարկվի մոնիտորինգի:**

**Հետաքրքրական է, ի՞նչ կանեն եվրոխորհրդարականները, եթե Վրաստանը հանկարծ որոշի, որ Եվրոպայի «էներգետիկ անվտանգությունն ապահովող» ադրբեջանական գազը չի կարող տարանցվել իր տարածքով, քանի որ եվրոպացիներն այնուամենայնիվ որոշել են այդ երկրում նախագահական ընտրություններին դիտորդական խումբ ուղարկել:**

**...Իսկ մենք սիրում ենք ասել, որ «ցանկացած ընտրություն պետք է համապատասխանի եվրոպական չափանիշներին»: Պետք է ավելացնել՝ նաեւ ալտրուիզմը, որովհետեւ ասված է նաեւ՝ «սերը սերով են հանում»:**

**Վ. Ա.**

## ԿՈՉ

# Հայաստանի ավետարանական ընտանիքի եկեղեցիների հովիվների ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ընդդեմ Հայաստանում այլասերվածությունների օրինականացման եւ հանուն ավանդական-հոգեւոր արժեհամակարգի պաշտպանության

**Մենք՝ Հայաստանի ավետարանական ընտանիքի եկեղեցիների հովիվներս՝**

**1. Խորին մտահոգություն ենք հայտնում, որ՝**

**ա. Դեռեւս 2008 թվից սկսվել է միջազգային փաստաթղթերում ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցող անձանց իրավունքների ընդլայնման գործընթացը. որոնց տակ Հայաստանը դրել է իր ստորագրությունը:**

**Այդ թվում՝ ԵԽ ԽՎ 2010թ. N1728 բանաձեւում հայտարարվել է (կետ 1), որ սեռական կողմնորոշումը «կարող է լինել հետերոսեքսուալ (տարասեռ), բիսեքսուալ (երկսեռ) եւ հոմոսեքսուալ (նույնասեռ)»՝ հանդիսանալով «յուրաքանչյուր մարդու ինքնաիդենտիֆիկացման սկզբունքային բաղադրիչը»: Այնուհետեւ՝ «Գենդերային ինքնությունը զուգակցվում է անհատի կողմից իր սեռի խորն ընկալման հետ: Տրանսգենդեր կոչվում են այն մարդիկ, որոնց մոտ գենդերային ինքնությունը չի համընկնում նրանց կենսաբանական սեռի հետ».**

**բ. Արեւմտյան որոշ երկրներում օրենսդրական մակարդակով վերանայման են ենթարկվում համամարդկային բարոյականության համակարգը, ամուսնական հարաբերությունների, ընտանիքի, ծնողների եւ երեխաների հարաբերության հիմքերը.**

**գ. Այսօր միջազգային հարթության մեջ տարբեր երկրների հետ տարվող բանակցություններում ի հայտ են գալիս ոչ-ավանդական սեռական կողմնորոշում ունեցող անձանց շահերին ամբողջատիրական բնույթ տվող օրենքների ներմուծման փորձերը:**

**2. Արձանագրում ենք, թե վերոնշյալ գործընթացներն իրենց արտահայտությունն են գտնում նաեւ Հայաստանում.**

**ա. Ի դեմս՝«Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի, որի երրորդ հոդվածում գենդերը, լինելով սոցիալ-հոգեբանական սեռ, սահմանվում է որպես «ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք».**

**բ. Հիշյալ օրենքում խոսվում է նաեւ նման կերպով սահմանված գենդերային հավասարության ապահովման ոլորտում միջազգային իրավունքի նորմերի պահպանման (հոդված 4), նորմատիվ իրավական բազայի ձեւավորման, կատարելագործման, զարգացման եւ միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխանեցման (հոդված 8) մասին.**

**գ. ՄԻՊ-ի աշխատակազմի կողմից մշակվող «Խտրականության դեմ» նախագծի առաջին տարբերակում 5-րդ հոդվածի 1-ին կետում, ի թիվս այլ խտրականությունների, անթաքույց ներառնված էր նաեւ ըստ «սեռական կողմնորոշման եւ գենդերային ինքնության» խտրականությունը, իսկ այսօրվա տարբերակում նշված հոդվածի 7-րդ կետում «ձեռքբերովի» այս գենդերը շարունակում է տարանջատված մնալ կենսաբանական սեռից, դառնալով, այսպես կոչված, «պաշտպանված» խմբի հատկանիշ, եւ «արժանանում» ավանդական արժեհամակարգին հետեւող անձանց ունեցած բոլոր իրավունքներին:**

**3. Տագնապ ենք բարձրացնում, որ այլասերվածությունների օրինականացման այդ շարժումը, ուղղված լինելով քրիստոնեական քաղաքակրթության, եւ ընդհանրապես մարդու տեսակի, ընտանիքի ինստիտուտի եւ մեր ազգային-հոգեւոր արժեհամակարգի ոչնչացմանը.**

**ա. Հավերժական բարոյական սկզբունքները փոխարինվում են բարոյագիտական հարաբերականությամբ, ձգտում անհատի ամբողջականության աղճատմանը եւ նրա մարմնավոր բաղադրիչի գերակայությանը.**

**բ. Նպատակ ունեն՝ ծնողներին երեխաների դաստիարակության «բեռից» ազատելու, կրթական համակարգում ձեւավորելու ցանկացած բարոյական սահմանափակում մերժող մարդուն.**

**գ. Գիտության նվաճումներն օգտագործում են՝ անհատի ծագումնաբանական կապն իր նախնիներից եւ ազգամշակութային հիմքից կտրելու, արվեստի մեջ ձգտում են՝ սիրո վեհ զգացմունքը բնազդների բավարարմամբ փոխարինելու:**

**4. Փաստում ենք, թե՝**

**ա. Աստվածաշունչն արձանագրում է, որ Արարիչը մարդուն ստեղծեց տարասեռ՝ այր եւ կին, օրհնեց նրանց ամուսնական միությունը եւ որդեծնությունը, տվեց մշակութային հանձնարարականը՝ երկրային բոլոր համակարգերը բերելու օպտիմալ արդյունավետության մի վիճակի (Ծննդոց 1.26-28).**

**բ. Հին կտակարանում խոսվում է Սոդոմ եւ Գոմոր քաղաքների ավերման մասին, նրա բնակիչների արվամոլության եւ ծայրահեղ ապականվածության պատճառով (Ծննդոց 19.4-11): Իսկ Ղեւտացվոց գրքում (18.22: 20.13) արվամոլությունը համարվում է պղծություն:**

**Նոր Կտակարանում Հռոմեացիների 1.24-27-ում, Ա Տիմոթեոս 1.9,10-ում Պողոս առաքյալը դատապարտում է համասեռամոլությունը՝ որպես մեղք, իսկ Ա Կորնթացիների 6.9-11-ում, ի թիվս այլ ծանրագույն մեղքերի, ահազանգվում է դրա հավիտենական կորստաբեր հետեւանքների մասին:**

**գ. Հակառակ հեթանոսության շրջանի այլասերվածություններին՝քրիստոնեությունն այնուհետեւ ուրբագնագործեց մոնոգամ ընտանիքը (Եբրայեցիների 13.4՝ «Ամուսնությունը պատվական է եւ անկողինը՝ սուրբ»)՝ Քրիստոսի զոհաբեր սերը ներկայացնելով որպես ամուսնական անձնուրաց սիրո համար օրինակ (Եփեսացիների 5.25):**

**5. Դիմում ենք հայ հասարակայնությանը՝**

**ա. Հորդորելու հայրենի իշխանություններին՝ օրենսդրական եւ գործադիր ոլորտներում, ինչպես նաեւ միջազգային ինտեգրման գործընթացում, հավատարիմ մնալու մեր ավանդական-հոգեւոր արժեհամակարգին, Ազգային Ժողովում ընդունելու համասեռամոլության եւ մյուս այլասերվածությունների քարոզչության արգելման օրենք.**

**բ. Հայտնելու իրենց նախանձախնդրությունը՝ բարձրացնելու քաղաքակրթության փրկության եւ քրիստոնեական արժեհամակարգի ջատագովության դրոշը.**

**գ. Կոչ անելու մեր հավատավոր եւ բոլոր հայրենակիցներին՝ ըստ ամենայնի պաշտպանել անցյալից ժառանգած մեր բարձրագույն արժեքները, միանալ այդ նպատակով նախաձեռնված ստորագրահավաքի շարժմանը:**

**Հայաստան երկրի եւ մեր ժողովրդի օրհնության համար բարեխոսական աղոթքով՝**

Եպիսկոպոս, վերապատվելի Ռուբիկ Թումանյան
Վերապատվելի Լեւոն Պարտազճյան
Վերապատվելի Արթուր Սիմոնյան
Վերապատվելի Ռաֆայել Գրիգորյան
Վերապատվելի Ռուբիկ Փահլեւանյան
Վերապատվելի Սամվել Նավոյան

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 24.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: